

Գ.Կ. ԾԱՌՈՒԿՅԱՆ, Ա.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Ուսումնամեթոդական ձեռնարկ)

**ԵՐԵՎԱՆ
2010**

**ՀՏԴ 796/799 (07)
ԳՄԴ 75 ց7
Ծ 319**

*Տպագրման են երաշխավորել Հայաստանի ազգային
օլիմպիական կոմիտեն և Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտի գիտական խորհուրդը*

Ծառուկյան Գ.Կ.

Ծ 319 «Հատուկ օլիմպիական շարժման պատմություն»:

Ուսումնական ձեռնարկ: Գ.Կ.Ծառուկյան, Ա.Գ.Հարությունյան. - Եր.: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, 2010.- 86 էջ:

Գրախոսներ՝ մանկ գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյան
մանկ գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Գ.Ղազարյան

Հայտնի է, որ Special Olympics International /SOI/ կազմակերպությունն ունի համաշխարհային մեջ ճանաչում, որի նպատակն է աշխարհի բազմաթիվ երկրների մտավոր սահմանափակումներ ունեցող ճարգիկների միջև կազմակերպել և անցկացնել մրցումներ:

Այս աշխատանքն ընդգրկում է Հատուկ օլիմպիական շարժման ծագման և զարգացման ընդհանուր պատմությունը, որին զուգահեռ առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է նաև այդ շարժման զարգացման ընթացքը Հայաստանում:

Ուսումնական սույն ձեռնարկը նախատեսված է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի մասնագետների համար:

Հուսով ենք, որ այն կիետաքրքրի նաև մարզասեր հասարակությանը, մանկավարժներին, բժիշկներին, մանկավարժարատարաններին, հոգեբաններին:

**ՀՏԴ 796/79(07)
ԳՄԴ 75 ց7**

ISBN 978-99941-2-418-3

© ՖԿՇՊԻ, Ծառուկյան Գ.Կ.,
Հարությունյան Ա.Գ., 2010

G.K. TSARUKYAN, A.G.HARUTYUNYAN

«THE HISTORY OF SPECIAL OLYMPIC MOVEMENT»

Recommended for publication by the National Olympic Committee of Armenia and Academic Council of the Armenian State Institute of Physical Culture.

Special Olympic International is worldwide known organization which organizes competitions in various sports among the mentally retarded athletes from around the world. The purpose of the organization is to contribute the raising of self-identity of person, and their integration in society.

This covers the origins and history of the Special Olympics movement, introducing the parallel development of this movement in the Armenian reality.

The manual is intended for students of the Armenian State Institute of Physical Culture and specialists in the field of sports.

We hope that it will be very interesting for sports enthusiasts, teachers, doctors, speech pathologists and psychologists.

ՆԱԽԱԲԱՆ

Աշխարհում որոշակի թվով երեխաներ ծնվում են տարբեր աստիճանի մտավոր խանգարումներով, սահմանափակումներով, որոնք խչընդոտում են նրանց հասարակության լիիրավ անդամ դառնալուն: Աշխարհի բազմաթիվ երկրներում նման մարդկանց շրջապատում են արժանի հոգատարությամբ: Ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ զբաղվելու հանրօգուտ աշխատանքով, մշակույթով, սպորտով:

Այս գործնթացի զարգացման նպատակով տարբեր ծրագրերի իրականացման գործունեություն է ծավալվել նաև Հայաստանի Հանրապետությունում: Այս համատեքստում յուրօրինակ է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում սկզբում՝ 2004-2005 ուսումնական տարում «Աղապտիվ ֆիզիկական կուլտուրա» մասնագիտության, իսկ այնուհետև 2008-2009 ուստարում «Աղապտիվ ֆիզիկական կուլտուրա» ամբիոնի ստեղծումը: Ինստիտուտի նպատակն է այդ ուղղությամբ մասնագետների պատրաստումը, որոնց առաջնային խնդիրն է ֆիզիկական վարժությունների և սպորտի միջոցով նպաստել տարբեր կարգերի հաշմանդամների ֆիզիկական, հոգեկան, սոցիալական վիճակի վերականգնմանն ու բարելավմանը:

2005 թվականից ինստիտուտում դասավանդվում է «Աղապտիվ ֆիզիկական կուլտուրայի պատմություն և կազմակերպում» դասընթացը, որի ծրագրում ընդգրկված են թեմաներ Հատուկ օլիմպիական շարժման վերաբերյալ: Դասընթացը ներառում է բազային գիտելիքներ, որոնք, անտարակույս, կընդլայնեն մասնագետների աշ-

խարիսխայացքը, կնպաստեն մասնագիտական ունակությունների և հմտությունների կատարելագործմանը:

Ուսումնական ձեռնարկում շարադրված է «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության /ՀՕԿ/ ծագման և զարգացման պատմությունն ու սոցիալական նշանակությունը՝ առողջ և կատարյալ հասարակություն ստեղծելու գործընթացում:

Սպորտային այս շարժումը, որը կոչվում է Special Olympics International /SOI/, չպետք է շփոթել Միջազգային օլիմպիական /ՄՕ/ շարժման հետ: Հատուկ օլիմպիական շարժումը ծնվել է ծառայելու այն մարդկանց, որոնց նկատմամբ բնությունը եղել է դաժան: Ըստ վիճակագրական տվյալների երկրագնդում ապրում է մոտ 150 միլիոն սակավամիտ մարդ: Սպորտային այս շարժման նպատակն է նրանց ընդգրկելով ֆիզկուլտուրայի և սպորտի շարժման մեջ, թերևացնել նրանց վիճակը՝ ամրապնդելով առողջությունը, պարզեցնելով երջանկություն, որպեսզի ննան մարդիկ վստահեն իրենց ուժերին, չզգան հասարակությունից կտրված, և վերջապես, չէ՞ որ այդ մարդիկ ամեն օր և ամենուր մեզ հետ են, մեր կողքին:

Ձեռնարկում բերված փաստերն անառարկելիորեն ճշմարտացի են. վերցված են մեծավ մասամբ Հայաստանի «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության արխիվային նյութերից, 1990-1992 թ.թ. ԱՄՆ-ում իրատարակված հատուկ փաստաթրերից, որոնք չեն իրատարակվել Խորհրդային հանրապետություններում, չնայած ողջ աշխարհը ծանոթ էր այս շարժմանը 1968 թվականից: Սակայն, «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության ստեղծման և գործունեության մասին նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ընդունվեց և ուշադրության արժանացավ միայն 1990 թվականից, իսկ տվյալ ծրագրի իրականացան հայկական մասնաճյուղը հիմնադրվել է

1993 թվականին, որի նախաձեռնողը և առաջին նախագահն էր նանկավարժ-արատաբան Գ.Վ.Մնացականյանը:

Ուսումնական ձեռնարկի նպատակը մեկն է՝ ապագա սերնդին թողնել փաստագրություն Համաշխարհային հատուկ օլիմպիական շարժման ծագման, աշխարհով մեկ նրա տարածման, հատկապես Հայաստանում այդ ուղղությամբ կատարված առաջին քայլերի վերաբերյալ: Ձեռնարկում ներկայացված են այդ գործը նախաձեռնող և կյանքում իրագործող, առաջին դժվար քայլերը հաղթահարող ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի որոշ գործիչների, առաջին մարզիկների նկարներ, աղյուսակներ՝ միջազգային և համամիութենական մրցումների անցկացման տարեթվերի, վայրի, մասնակից երկրների և մարզիկների թվաքանակի վերաբերյալ:

Հուսով ենք, որ ուսումնական ձեռնարկը կիետաբերքը բարձր մարզասեր հասարակությանը, մանկավարժներին, գրողներին և ընդհանրապես հասարակության լայն խավերին, որոնց համար մատաղ սերնդի ուսուցման, կրթության և դաստիարակության հարցերը, հատկապես սակավամիտ երեխաներինը, առաջնահերթ են: Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը բնեուել մեր հանրապետությունում ապրող սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող մարդկանց վրա, որոնք եղել են, կան և կլինեն մեզ հետ և նրանց երջանիկ տեսնելու, իրենց ուժերի և հնարավորությունների նկատմամբ հավատով լցվելու բանալին մեր ձեռքին է, մենք պետք է մեր լավագույն մոտեցմամբ «կանաչ լույս» վառենք նրանց ճանապարհին, իսկ այդ ճանապարհը Հատուկ օլիմպիական շարժման ճանապարհն է:

ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Մտավոր հետամնաց են համարում այն մարդկանց, որոնց ինտելեկտուալ մակարդակը ցածր է միջինից, ուսուցումը և միջավայրին հարմարվելը՝ աղապտացման հատկությունը դժվարացած է կամ անբավարար: Այն հիվանդագին վիճակ է, ոլխուղեղի զարգացման խանգարումների հետևանք: Այսինքն՝ սակավամիտ է կոչվում այն երեխան, որը գլխուղեղի օրգանական վնասվածքի պատճառով ունի ճանաչողական գործունեության կայուն խանգարում: Մտավոր հետամնաց երեխաները զարգացման ընթացքում նույն փուլերն են անցնում, ինչ առողջները, սակայն դանդաղ, և ի վերջո մնում են ցածր, հիմնականում նախադպրոցական տարիքի երեխաների մակարդակին: Այս երեխաները որոշ չափով կարող են սովորել, մտավորապես զարգանալ, համակշռել վնասված ֆունկցիաները /C.H.Պոպօվ, 1999/:

Նրանց շարժողական ընդունակությունները, նույնպես զարգանում են դանդաղ և հետ են մնում հասակակիցների նորմերից: Բայց հնարավոր է, որ երեխայի տարիքի զարգացմանը գուգընթաց, ձկունությունն ու դիմացկունությունը հավասարվեն նորմային, սակայն արագաշարժության, ուժի, դիպուկության, հավասարակշռության զարգացման մակարդակը անկայուն են: Շարժողական ընդունակությունների զարգացման մակարդակը սերտորեն կապված է մտավոր աշխատունակության զարգացման հետ: Շարժողական ընդունակությունների զարգացման վերաբերյալ գիտելիքներն օգնում են մտավոր հետամնացների վերականգնողական ֆիզիկական կուլտուրայի մեթոդի ստեղծմանը: Ֆիզիկական

վերականգնողական գործընթացում լայնորեն օգտագործում են ֆիզիկական դաստիարակության բոլոր միջոցները, իսկ մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ մանկավարժական-վերականգնողական, մանկավարժական-սպորտային: Երկրորդ խմբի պլանավորված, կազմակերպված գործընթացը մարզիկներով ապահովում է «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությունը: Գործընթացի նպատակն է հնարավորինս օգնել նրանց տարիքին համապատասխան վերականգնելու մարմնի ֆիզիկական վիճակը: Դրա համար ընտրվել և մշակվել են վարժությունների տեսակներ, խաղեր, որոնք հնարավորություն են ընձեռում ձեռք բերել շարժումների հավասարակշռություն, ճկունություն, արագաշարժություն, մարմնի ներդաշնակության ապահովում, նուրբ շարժումների մշակում, տարածության և ժամանակի մեջ կողմնորոշում: Մարզման գործընթացում պետք է հաշվի առնել առողջական վիճակը, տարիքային և անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, ունակությունները, հնարավորությունները, սպասվելիք մարզական արդյունքները: Մարզում պետք է իրականացնել հուզական դրական մթնոլորտում և անպայմանորեն գնահատել հաջողությունները: Հետազոտությունները ցույց են տվել, որ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներից, պատանիներից շատերը, որոնք ընդգրկված են եղել Հատուկ օլիմպիական շարժման մեջ, հետագայում կարողանում են մասամբ ինքնուրույն կյանք վարել /Գ.Ս.Բաբախանյան/:

Այս գործընթացի ծավալմանը և զարգացմանը նպաստել է 1971 թվականի դեկտեմբերի 20-ին Միացյալ

ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Մտավոր հետամնաց մարդկանց իրավունքների մասին հռչակագիրը» /Բանաձև 2856 (XXVI)/, ուր մասնակիորեն նշվում է, որ Գլխավոր ասամբլեան գիտակցելով Միացյալ ազգերի կազմակերպության անդամ պետությունների ստանձնած պարտավորությունը և համաձայն կանոնադրության պետք է հաճագործակցել ՄԱԿ-ի հետ ինչպես միասնական, այնպես էլ անհատական կերպով՝ նպատակ ունենալով աջակցել կենսամակարդակի բարձրացմանը, զբաղվածության լիովին ապահովմանը և տնտեսական ու սոցիալական ոլորտների բարելավմանն ու զարգացմանը: Անդրադառնանք վերոհիշյալ հռչակագրի որոշ հոդվածների:

- Կրկին հաստատելով կանոնադրության մեջ հռչակված մարդու իրավունքների ու ազատության, ինչպես նաև խաղաղության, արժանապատվության սկզբունքների, մարդկային արժեքների և սոցիալական արդարության նկատմամբ հավատը:

- Վկայակոչելով «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», «Մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերի», «Երեխայի իրավունքների հռչակագրի» սկզբունքները և սոցիալական առաջընթացի չափանիշները, որոնք արդեն հռչակված են Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային հարցերով զբաղվող կոմիտեի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և այլ շահագրգիռ կազմակերպությունների սահմանադրություն-

ներում, կոնվենցիաներում, հանձնարարականներում և բանաձևներում:

- Ընդգծելով, որ «Սոցիալական առաջընթացի և զարգացման հռչակագրում»նշվում է ֆիզիկական և մտավոր թերություններ ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության, բարեկեցության ապահովման և աշխատունակության վերականգնման անհրաժեշտության մասին:

- Հաշվի առնելով գործունեության տարբեր ոլորտներում մտավոր հետամնաց մարդկանց ընդունակությունների զարգացման գործում օգնություն ցուցաբերելու և հնարավորության սահմաններում հասարակության կյանքում նրանց ներգրավման անհրաժեշտությունը, իարկ է գիտակցել, որ որոշ երկրներ զարգացման տվյալ փուլում կարող են միայն սահմանափակ ջանքեր ներդնել նշված նպատակները իրագործելու համար:

Այսպիսով, սույն հռչակագրը հռչակում է մտավոր հետամնաց մարդկանց իրավունքների մասին և խնդրում ազգային ու միջազգային մակարդակով միջոցներ ձեռնարկել, որպեսզի հռչակագրն այս իրավունքների պաշտպանման համար ընդհանուր հիմք և ուղեցույց ծառայի:

Սոցիոլոգիական ուսումնասիրությունները /Ա.Աբրահամյան, 2003/ ցույց են տվել, որ հասարակությունը և նույնիսկ պետական մարմիններն անտեղյակ են մտավոր խանգարմանք հաշմանդամների հիմնախնդիրներին, որոնք էլ պատճառ են դարձել այնպիսի թույր կարծիքի ծևավորմանը, ըստ որի մտավոր խանգարմանք հաշմանդամը հասարակության մեջ չունի այլ անձանց հետ

շփման եզրեր: Մինչդեռ, ողջ քաղաքակիրթ աշխարհում ընդունված և փորձված մեթոդներն ու մոտեցումները թույլ են տալիս մտավոր խանգարմամբ հաշմանդամ մարդկանց կենսագործելիության առավելագույն սահմաններում ադապտացմել առօրյա կյանքին և ինտեգրել հասարակությանը:

Ի հակադրություն գոյություն ունեցող պատկերացումների՝ մտավոր հետամնացությունը հոգեկան հիվանդություն չէ, սակայն որոշ հոգեկան հիվանդություններ կարող են առաջ բերել մտավոր հետամնացություն: Մտավոր հետամնացները կարող են ունենալ սոցիոգեն բնույթի հոգեկան խնդիրներ. նրանք կարող են լինել շատ նրբանկատ, ընկճվել անհաջողություններից և դառնալ առավել պարփակված, մշտապես օգնություն ակնկալողի կարգավիճակում, չեն կարող պիտանի լինել շրջապատին, կարող են ունենալ չբացահայտված տաղանդ, որի ցայտուն ապացույցն են Հատուկ օլիմպիական շարժման ծագման և զարգացման պատմության մեջ ընդգրկված փաստերը:



**«Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության հիմնադիր –
Յունիս Քենեդի Շրայվեր**



**Հայաստանի ներկայացուցիչները «Միջազգային հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության նախագահ
Սարժենտ Շրայվերի հետ**

ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՔԻՄՍԱՅԱՐՑԵՐԸ

«Միջազգային հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմության մեջ նոր երևույթ է, մարդասիրական շարժում, որի նպատակն է շուրջտարյա մարզումների միջոցով սպորտի մեջ ներգրավել այն երեխաներին և մեծահասակներին, որոնք համարվում են մտավոր թույլ կարողությունների տեր և ունեն ֆիզիկական այս կամ այն խաթարվածությունը:

«Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությունը սիրողական է. նրանք ազգային օրիներգեր չեն հնչում, ազգային դրոշ չի բարձրացվում, քաղաքական և կրոնական ոչ մի հոսանքի հետ առնչություն չունի: Կազմակերպությունն ունի սեփական դրոշ և տարբերանշան, որոնք պարտադիր են բոլոր այն պետությունների համար, որոնք կմտնեն այդ կազմակերպության մեջ:

Երեխան մեղավոր չէ, որ ծնվել է մտավոր կամ ֆիզիկական արատներով, իսկ թե ինչո՞ւ են նրանք այդպես ծնվում, դա այլ ծավալուն թեմա է:

Գոյություն ունի սակավամտության առաջացման մոտ 350 պատճառ: Հասարակության որոշ խավերի մոտ ձևավորվել է կարծիք, թե ժամանակակից բժշկությունը պետք է վերացնի նման երեխաներին, որը միջնադարյան մտածելակերպ է և ոչ մարդկային:

1990 թ. ԱՄՆ-ում հրատարակված և քիչ տարածում ստացած գիտական տվյալներով, ինչպես վերը նշվեց, աշխարհում կա մոտ 150 միլիոն սակավամիտ մարդ, որոնց մոտ 35 միլիոնը միջին և ծանր մտավոր հետամնաց-

ներ են: Սակավամիտ մարդկանց 89 տոկոսի մոտ այն արտահայտվում է թերև ձևով և շատ դեպքերում չեն տարբերվում նորմալ երեխաներից: Մասնավորապես, ԱՄՆ-ում նրանց թիվը 7,5 միլիոն է կազմում:

Սակավամտությունը ինն անգամ ավելի է ուղեղային կաթվածից, տասնինգ անգամ՝ լրիվ կուրությունից, երեսունինգ անգամ՝ մկանային դիստրոֆիայից:

Սակավամիտ մարդկանց աշխարհագրական տարածվածության տոկոսային հարաբերությանը պատկերը հետևյալն է՝ Աֆրիկայում -10, Ասիայում - 8, Լատինական Ամերիկայում - 8 , Ավստրալիայում - 2, Յուսիսային Ամերիկայում - 2,5 , Եվրոպայում - 2-2,5:

Ցավոք, ինչպես ԽՄՀՍ-ում, այնպես էլ Հայաստանում ստույգ թվական տվյալները բացակայում են՝ խորհրդային Միությունում մոտավորապես 620 հազար երեխաներ, իսկ Հայաստանի օժանդակ դպրոցներում՝ մոտավորապես 3000 երեխաներ ընդգրկված են եղել հատուկ ուսուցման դպրոցներում: Ներկա ժամանակաշրջանում ՀՀ սոցիալական ապահովության և առողջապահության նախարարությունների տվյալների համաձայն, Հայաստանում կան մոտ 117.000 հաշմանդամներ, որոնցից մտավոր խանգարմանը հաշմանդամները կազմում են մոտ 20 տոկոս:

ԽՄՀՍ արատաբանության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Վ. Ի. Լուբովսկու տվյալներով նման երեխաների քանակը Միության մեջ կազմում էր 4,5 տոկոս, այսինքն նրանց թիվը 1,8 միլիոնից ավելի էր: Ամերիկացիները ներկայացնում են 11 տոկոս, որովհետև նրանք հաշվի են առնում, նույնիսկ,

նորմայից ամենաաննշան շեղումը և առաջադրում են շտկել այդ շեղումը որոշակի տարիքային շրջանում, իսկ ԽՍՀՄ-ում նման աննշան շեղումներին ընդհանրապես ուշադրություն չէին դարձնում, բացակայում էին համապատասխան թեստերը, սարքավորումները և, ինչպես նաև և համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետները:

Սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության և ֆիզիկական մարզման գործում ԽՍՀՄ և ԱՄՆ-ի համակարգում կար մեծ տարբերություն: Այսպես՝ սկսած 1970 թվականից ամերիկյան մանկավարժ-գիտնականները առաջարկել են միասնական ներառական /ինտեգրացված/ ուսուցում: Նրանք գտնում են, որ սակավամիտ երեխան պետք է սովորի մասսայական դպրոցում իր հասակակիցների հետ, միևնույն դասարանում կամ հատուկ դասարաններում: Յոգեբանները գտնում են, որ միասնական ուսուցումը նպաստում է սակավամիտ երեխայի այս կամ այն մտավոր արատի շտկմանը՝ հիմք ընդունելով նրա նորմալ հասակակցի վարքը: Յիմնականում համաձայն լինելով ամերիկացի գիտնականների առաջարկի հետ, պետք է միաժամանակ նշել, որ ինտեգրացիայի հարցում մեծ դեր ունի տվյալ ազգի հոգեբարոյական դաստիարակությունը: ԱՄՆ-ում այն երեխաները, որոնք ունեն հոգեկան և ֆիզիկական շեղումներ, կոչվում են «հատուկ երեխաներ», ամերիկյան մասնագետները նման «հատուկ» անվանում են տալիս նաև այն երեխաներին, որոնք ուսման գործում ցուցաբերում են բացարձակ ընդունակություններ՝ ելնելով նրանից, որ այդպիսի երեխաները, նույնպես,

արժանի են հատուկ ուշադրության՝ խորացնելու իրենց բնատուր ընդունակությունները:

Դայաստանում գործող 17 օժանդակ գիշերօթիկ դպրոցներում, ինչպես վերը նշեցինք, սովորում էին մոտավորապես երեք հազար դպրոցական: Բացակայում էին վիճակագրական տվյալներ այն մասին, թե որքա՞ն երեխաներ մտավոր և ֆիզիկական արատի պատճառով չեն հաճախել համապատասխան ուսումական հաստատություններ և մնացել են տանը՝ ծնողների խնամքի տակ:

Միջազգային հատուկ օլիմպիական շարժման նպատակն է՝ շուրջտարյա մարզումների, մրցումների միջոցով սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող երեխաների մոտ կայունացնել բնավորությունը, զարգացնել ֆիզիկական ունակությունները և կարողությունները, մերձեցնել հասարակությանը:

Միջազգային հատուկ օլիմպիական շարժման փիլիսոփայությունն այն է, որ սակավամիտ մարդիկ հատուկ ուսուցման դեպքում, միաժամանակ մասնակցելով թիմային ու անհատական մրցումների, կստանան հոգեկան և ֆիզիկական բավարարվածություն: Նման մարդիկ շահում են ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առումով, իրենց զգալով հասարակությունից չկտրված, պիտանի նրա ուշադրության կենտրոնում գտնվողներ:

Դատուկ օլիմպիական շարժման կարգախոսն ու երրումն է՝ **«Տուր ինձ հաղթանակ, իսկ եթե չկարողանամ, թող լինեմ արի այս փորձում»:** «Միջազգային հատուկ օլիմպիական» կազմակերպության հիմնադիրը ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջոն Քենեդու քույրն է՝ Յունիս

Քենեդին, որը 1963թ. Մերիլենդ քաղաքում, կազմակերպում է ճամբար, սակավամիտ երեխաների և մեծահասակների համար՝ ուսումնասիրելով նրանց ֆիզիկական կարողությունները և հմտությունները տարբեր մարզաձևերում: 1964-1988 թ.թ. ԱՄՆ-ում բացվում են հարյուրավոր ննանատիպ ամառային ճամբարներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հնացել է այն կարծիքը, թե սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող երեխաները ոչնչի ընդունակ չեն, մասնավորապես սպորտում:

Յունիս Քենեդի Շրայվերը ԱՄՆ-ում հայտնի Քենեդիների գերդաստանի Ռոզա և ժողեք Ֆիջերալ Քենեդիների 9 երեխաներից հինգերորդն է, ծնվել է Բրուկլինում /Մասաչուսետ նահանգ/, ունի սոցիալական գիտությունների բակալավրի աստիճան, ավարտել է Կալիֆորնիայի նահանգի Ստենֆորդի համալսարանը: Շուրջ 30 տարի իրեն նվիրել է աշխարհում մտավոր հետամնաց մարդկանց կյանքի պայմանների բարելավման աշխատանքին: Գործածության մեջ է դրել 1946 թ. հիմնադրված հոր թողած ֆոնդը՝ որպես հուշ ժողեք Քենեդու ավագ որդու, որը զոհվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ /1941-1945 թ.թ./:

Ֆոնդն ունի երկու նպատակ.

- Գտնել պատճառը և կանխել մտավոր թերզարգացման առաջնայինը.
- Օգնել մտավոր թերզարգացած մարդկանց՝ գտնելու իրենց տեղը կյանքում:

ԱՄՆ-ի Արևմտյան Վերջինիա նահանգում 1947 թ. Յունիս Քենեդին ղեկավարում է կանանց ուղղիչ հաստա-

տությունը, 1961 թ. մտավոր հետամնացության գծով հիմնադրում է նախագահական կոմիտե, 1962 թ. հիմնում է երեխաների առողջության և մարդկության զարգացման ազգային ինստիտուտ, 1963 թ. ստեղծում է մտավոր հետամնաց մարդկանց համար չափորոշիչներ և թեստեր, տեղեկատվական կենտրոններ:

1961-1986 թ.թ. Յունիս Քենեդու առաջարկությամբ ստեղծվել են բազմաթիվ ազգային կենտրոններ և ինստիտուտներ՝ մտավոր թերզարգացած մարդկանց բժշկական, սոցիալական, իրավական, աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ, հիմնվում են ազգային մակարդակով բազմաթիվ ծրագրեր, սակավանտության ուսումնաժողովներ լրատվական կենտրոններ. մասնավորապես 1962 թ. ստեղծվում է Քենեդու անունը կրող մրցանակ՝ սակավամտության կանխարգելման դեմ մղվող պայքարի համար:

1964 թ. Յունիսի ջանքերով ԱՄՆ-ի Կոնգրեսը ընդունում է հատուկ օրենք սակավամիտ քաղաքացիներին աշխատանքով ապահովելու վերաբերյալ: Վերջապես, աշխարհում այժմ հայտնի «Դատուկ օլիմպիադաներ» կազմակերպության ստեղծումը դարձավ նրա աշխատանքային ծառայության արգասիքը:

Յու. Քենեդու կատարած մարդասիրական աշխատանքը բարձր գնահատականի է արժանացել ԱՄՆ-ում: 1984 թ. մարտի 24-ին ԱՄՆ-ի նախագահ Ռ.Ռեյգանը նրան է հանձնում ազգային բարձրագույն պարգև՝ «Ազատության» մեդալ: Դանձննան արարողության ժամանակ Ռ.Ռեյգանն ասել է. «Յունիս Քենեդին մեծ համոզմունքներով և ջանքերով աշխատել է մտավոր թույլ մարդկանց

կյանքը բարելավելու համար, նրա աշխատանքը օգուտ է տվել շատ նարդկանց, և նա արժանի է ամերիկացիների երախտագիտությանը, գովասանքին ու սիրուն»:

Յու.Քենեդու հիմնած գործի ղեկավարությունը հետագայում շարունակեց նրա ամուսին՝ Սարժենտ Շրայվերը՝ մասնագիտությամբ իրավաբան-միջազգայնագետ:

1947-1948 թ.թ. Վաշինգտոնում նա կնոջ հետ ղեկավարել է իրավախախտ անչափահասների կոնֆերանսը: 1955-1960 թ.թ. եղել է Չիկագոյի կրթության բաժնի նախագահ: Մեծ աշխատանք է տարել ԱՄՆ-ի նահանգներում և ամբողջ աշխարհում իրականացնելու Հատուկ օլիմպիական շարժման մարդասիրական ծրագրերը: 1984 թ. ընտրվել է «Միջազգային հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության նախագահ: 1990 թվականի փետրվարին Ս.Շրայվերի երկարատև և համառ ջանքերի շնորհիվ ԽՍՀՄ-ը մտավ միջազգային Հատուկ օլիմպիական շարժման մեջ /ԽՍՀՄ-ի նախագահ Մ.Գորբաչովի օրոք/, որանով իսկ և ճանապարհ բացելով Հայաստանի համար:

Ծնողների ստեղծած այս մարդասիրական կազմակերպության աշխատանքներին ակտիվորեն նախնակցում էին նրանց զավակները և բարեկամները: Սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող մարդկանց ծառայելը դարձել էր Քենեդի-Շրայվեր գերդաստանի սուրբ նպատակը:

Սպորտային այս նոր շարժման գաղափարը, ինչպես տեսնում ենք պատմության մեջ է մտել, որպես իր ծննդով ամերիկյան գաղափար: Սակայն կան գրավոր և ֆոտո փաստեր, որոնք ցավոք, շատ վատ են պահպանված և ժամանակին չիրապարակված, որոնցում

նման միտք ժամանակին արտահայտել և Երևանի թիվ 1,2 օժանդակ գիշերօթիկ դպրոցներում իրականացրել է ֆիզկուլտուրայի ուսուցիչ Գ.Վ. Մնացականյանը: Նա 1967 թ. մարտին «Ֆիզիկական դաստիարակությունը և նրա առանձնահատկությունները օժանդակ դպրոցում» թեմայով հանդես է եկել հանրապետական մանկավարժական ընթերցումներում: Պահպանվել են ֆոտոփաստեր, որոնցում Գ.Վ. Մնացականյանի ջանքերով կազմակերպվել և անցկացվել են միջդպրոցական մրցումներ՝ վոլեյբոլից, ֆուտբոլից, աթլետիկայից թիվ 1, 2, 8 օժանդակ դպրոցների միջև:

Ակնհայտ է նաև այն փաստը, որ Խորհրդային իշխանության տարիներին լրատվական միջոցները չեին կարող հայտնել ԱՄՆ-ում կատարվող այդօրինակ աշխատանքների մասին: Սակայն, այնուամենայնիվ 1963 թ. փետրվարին Երևանի թիվ 1 հատուկ գիշերօթիկ դպրոցում /նախկինում այդպես էր անվանվում օժանդակ թիվ 1 գիշերօթիկ դպրոցը, իսկ այսօր թիվ 154 դպրոց/ բացվում է մարմնամարզության խմբակ /ղեկավար Գ. Մնացականյան/:

ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՊԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՔԻՄՍԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԽԸՆԵՐԸ

Աշխարհում Հատուկ օլիմպիական շարժման /SOCS/ միասնական զարգացման գործընթացը կազմակերպելու կարևորագույն փաստաթուղթը Special Olympics International-ի գլխավոր կամոններն են, որոնք կազմված են 10 հոդվածներից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կազմված է համապատասխանաբար 3, 15, 19, 16, 23, 6, 13, 12, 9, 6 ենթակետերից:

Հոդված առաջինը ներառում է Special Olympics-ի նպատակը, հիմնական սկզբունքները, որտեղ մասնակուրապես նշված է.

Հատուկ օլիմպիադաների առաքելությունը հանդիսանում է մտավոր հետամնաց մարդկանց համար օլիմպիական տարբեր մարզաձևներից շուրջտարյա մարզումների և մրցումների կազմակերպումը, որոնք մշտական հնարավորություններ են ստեղծում պահպանել և բարելավել ֆիզիկական ընդունակությունները, դրսնորել արիություն, զգալ ուրախություն, միաժամանակ ընտանիքի անդամների հետ միասին ստեղծել բարեկամական հարաբերություններ տարբեր մարզիկների և հասարակության սոցիալական խմբերի հետ:

Հատուկ օլիմպիադաների նպատակն է օգնել մտավոր հետամնաց մարդկանց դառնալու հասարակության լիիրավ անդամ, արդյունավետորեն մասնակցել հասարակական կյանքին և հնարավորություն ընձեռել այդ մարդկանց մարզական միջոցառումների միջոցով ցուցադրել իրենց ունակությունները, տաղանդը և այս

ճանապարհով, նույնպես, հասարակությանը տեղեկացնել իրենց հնարավորությունների և պահանջների մասին:

Հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա ստեղծվել և կազմավորվել է Special Olympics-ը, ապագայում ևս շարժման զարգացման գործընթացը կազմակերպելիս, նույնպես, պետք է որոշիչ դեր կատարեն: Դրանք են.

ա/ մտավոր հետամնաց մարդիկ ունենալով համապատասխան ուսուցում կարող են մասնակցել մտավոր և ֆիզիկական որոշակի սահմանափակումներ ունեցող մարդկանց պահանջներին համապատասխան աղապտացված անհատական և թիմային մարզաձևներից մարզումների, մրցումների և հնարավորության սահմաններում սովորել ստանալ հաճույք ու օգուտ,

բ/ բարձրակարգ մարզիչների դեկավարությամբ կազմակերպված ամբողջական մարզման գործընթացը ուղղված է մասնակիցների մարզավիճակի բարելավմանը, ինչպես նաև մարզական ունակությունների զարգացմանը, իսկ մարզական միջոցառումները նմանատիպ ընդունակություններ ունեցող մարդկանց ունակությունները գնահատելու ամենածիշտ մեթոդն է,

գ/ սպորտային մարզումների և մրցումների միջոցով կատարելագործվում է մտավոր արատ ունեցող մարդկանց ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր զարգացումը, ամրապնդվում է փոխհարաբերություններն ընտանիքում, իսկ հասարակությունը հետևելով միջոցառումներին՝ արդյունքում միավորվում է մտավոր

հետամնաց մարդկանց հետ հավասարության, հարգանքի պայմաններում,

դ/ մտավոր արատ ունեցող յուրաքանչյուր մարդ, համապատասխան Special Olympics International-ի գլխավոր կանոնակարգի չափորոշչների, պետք է ունենա հնարավորություն օգուտ ստանալու Special Olympics-ի մարզական միջոցառումների ծրագրերից,

Ե/ Հատուկ օլիմպիական կազմակերպությունը պետք է հաղթահարի ռասսայական, կրոնական, աշխարհագրական սահմանները, ինչպես նաև ազգային և քաղաքական երևույթների մասնատվածությունը, ստեղծելով հնարավորություններ մարզման և մրցումների համար՝ համաձայն մտավոր արատ ունեցող մարդկանց համաշխարհային-միջազգային ընդունված չափորոշչների,

զ/ Special Olympics-ը ողջունում է մարզական միջոցառումներին մասնակցելու համար կազմակերպվող բոլոր աշխատանքները և ձգտում է սերմանել սեր ու մարզական ոգի: Այդ նպատակին հասնելու համար Special Olympics-ը նախատեսում է ընձեռել հնարավորություն յուրաքանչյուր մարզիկի մասնակցել մարզումների և մրցումների, որոնք թույլ են տալիս մարզիկներին ցուցադրել իրենց ընդունակությունների մակարդակն ու ներուժը,

Է/ Special Olympics-ը ողջունում է տարբեր տարածաշրջաններում, առանձին կազմակերպություններում

/հատկապես դպրոցներում/ մարզումների և մրցումների կազմակերպման աշխատանքները, որոնք միջոց են այս ծրագրում ավելի շատ մարզիկների ընդգրկմանը և իրավունք են վերապահում մասնակցելու Special Olympics-ի ծավալած գործունեությանը:

Յողված 2-րդը ներառում է Special Olympics-ի սահմանումները /ձևակերպումները/, կառուցվածքը՝ «Հավատարմագրման հաստատում» /լիազորագրում, հավատագրում/. Նշանակում է Գլխավոր կանոնակարգի գրավոր հաստատում և յուրաքանչյուր հավատարմագրված ծրագիր պետք է ներկայացնի Special Olympics international-ի գործունեությունը. «Հավատարմագրված չափորոշչներ». Նշանակում է գրավոր չափորոշչներ, որոշված SOI-ի կողմից, որպեսզի վերանայվեն, նորացվեն կամ ներկայացնեն նոր ծրագրեր.

«Հավատարմագրման մակարդակ». Նշանակում է որոշակի գործունեության զարգացում.

«Հավատարմագրված ծրագրեր». Իրենից ներկայացնում է ազգային յուրաքանչյուր ծրագիր, ԱՍՍ-ի տարածաշրջանում գործող ծրագրեր, որոնք ստանձնել են SOI-ի լիազորությունները և աշխարհագրական իրավասության սահմաններում կազմակերպում և անցկացնում են մարզումներ ու մրցումներ.

«Ազգային կոմիտե». Իրենից ներկայացնում է հավատարմագրված ծրագրերի ղեկավարների խորհուրդ, որը գործում է որպես կոմիտե կամ ասոցիացիա և ազգային ծրագրերի կառավարման հիմնական պատասխանատուն է.

«Խաղեր». ընդհանուր առնամբ Special Olympics-ի անառաջին կամ ձմեռային խաղերն են, որոնք կազմակերպում է SOI-ը: Խաղերի կազմակերպչական կոմիտեն, հավատարմագրված ծրագրերը կամ այլ կազմակերպություններ, իրավական ամձեր, որոնք SOI կողմից ստացել են հավատագրեր, կարող են օգտագործել Special Olympics-ի խորհրդանշերն այլ մարզական միջոցառումներ անցկացնելիս:

Յոդվածում ընդգրկված են ևս մի շարք սահմանումներ, որոնք բնորոշում են Special Olympics-ի գործունեության բովանդակությունը: Դրանք են՝ «Շարժողական ակտիվության մարզման ծրագրեր», «Միջազգային խաղեր», «Ազգային խաղեր», «Ազգային ծրագրեր», «Պաշտոնական մարզաձևեր», «Արգելված մարզաձևեր», «SOI-ի մարզական կանոնները», «Զահով վագը», «Մրցաշար» և այլն:

Special Olympics International-ի դերը կայանում է նրանում, որ այն հանդես է գալիս, որպես Special Olympics-ի ստեղծող՝ հիմնված Յունիս Քենեդի Շրայվերի ստեղծած ծրագրերի վրա և կառավարում է Special Olympics միջազգային շարժումը: Այն որոշում և ապահովում է բոլոր պաշտոնական քաղաքական որոշումների և պահանջների կատարումը, վերահսկում է ամբողջ աշխարհում Special Olympics-ի ծրագրերի ընդլայնումը, ինչպես նաև ապահովում է այդ ծրագրերի ուսուցման աշխատանքները: Այն բարեգործական կազմակերպություն է /առանց շահույթի ակնկալիքի/ և ազտված է հարկերի մուծումից: Գլխավոր գրասենյակը գտնվում է Վաշինգտոն քաղաքում /ԱՄՆ/:

Կազմակերպության կարևոր պարտականություններից է Special Olympics-ի ինտելեկտուալ ընդունակությունների օգտագործման պաշտպանությունն ու հավատարմագրումը, ըստ որի յուրաքանչյուր երկիր կարող է օգտագործել «Special Olympics» անվանումը միայն SOI-ի թույլտվությամբ: Նա է կայացնում միասնական չափորոշիչների ընդունակ որոշումները, մարզումների և մրցումների անցկացման կանոնները, համաշխարհային ու տարածաշրջանային խաղերի և տարբեր միջոցառումների կազմակերպումը, կառավարում է համաշխարհային Special Olympics շարժումը, նյութական միջոցների վերահսկումը և այլն:

Այս հոդվածում առանձնահատուկ շեշտադրվում է կազմակերպության հարաբերությունները, համագործակցությունը ՄՕԿ-ի, ԱՄՆ-ի օլիմպիական կոմիտեի, ազգային օլիմպիական կոմիտեների, միջազգային մարզական ֆեդերացիաների, ՄԱԿ-ի, «Քենեդիի ֆոնդի» և այլ կազմակերպությունների հետ:

Միջազգային օլիմպիական կոմիտեն պաշտոնապես ճանաչել է Special Olympics International-ը 1988 թվականի փետրվարի 15-ին և համաձայնել է համագործակցել որպես մտավոր հետամնաց մարզիկների ներկայացուցչի հետ:

SOI-ը ոչ պետականորեն գրանցված է ՄԱԿ-ն կազմում և որպես ոչ պետական կազմակերպություն կրում է պատասխանատվություն աշխարհի տարբեր երկրների հետ փոխհամագործակցելու գործընթացում, հատկապես մարզումների և մրցումների ծրագրերի կազմակերպման ուղղությամբ:

Հոդված 3-րդում ներկայացված է SOI-ի և Հատուկ օլիմպիական շարժման կառավարման գործունեությունը, ըստ որի SOI-ը լիազորված է հրատարակելու և նորացնելու գործող Գլխավոր կանոնները, միասնական չափուղիչները և այլ քաղաքական բովանդակությամբ փաստաթեր, ինչպես նաև Հատուկ օլիմպիական շարժման զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավորման, հավատարմագրման կազմակերպումը:

Կառավարման գործընթացում առաջնային է նաև տեղեկատվության փոխազդեցությունը Special Olympics-ի շրջանակներում, հատկապես Special Olympics International-ի և բոլոր հավատարմագրված ծրագրերի, խաղերի կազմակերպչական կոմիտեների, խորհրդատու կոմիտեների միջև:

SOI-ի կառավարումը կազմակերպվում է իր կողմից լիազորված վերատեսչական խորհրդի միջոցով։ Այն պատասխանատվություն է կրում SOI-ի և Հատուկ օլիմպիական շարժման ոլորտում քաղաքական որոշումների ընդունման հիմնահարցերի շրջանակներում, որն ամրագրվում է միասնական չափորոշիչներում։

Կառավարման համակարգում ընդգրկված անդամները պետք է։

- Հատուկ օլիմպիական շարժման վերաբերյալ տիրապետեն խոր գիտելիքների և ունենան պրակտիկ փորձ։

- Հասկանան և իմանան SOI-ի մեջ ընդգրկված տարբեր խորհրդների պարտավորությունները,

- Հատուկ օլիմպիական շարժման զարգացման համար հանդես գան Special Olympics -ի հիմնական սկզբունքների արդյունավետ ներդրման հարցերով։

- Պարբերաբար մասնակցեն կազմակերպվող կոնֆերանսներին, նիստերին և այլն։

Special Olympics International- ը որոշում է նաև Հատուկ օլիմպիական շարժման շրջանակներում օգտագործվող պաշտոնական լեզուները. դրանք են անգլերենը և ֆրանսերենը։

Ընդհանրացված SOI-ի կառավարման համակարգում ընդգրկված են հետևյալ կոմիտեները, խորհրդները՝

Միջազգային կոնսուլտացիոն /խորհրդատվական/ կոմիտե, Սպորտային կանոնների կոնսուլտացիոն կոմիտե, Գլխավոր կանոնների կոնսուլտացիոն կոմիտե, Բժշկական հարցերով կոնսուլտացիոն կոմիտե, «Զահով վագը» շարժման կատարողական խորհրդութ և այլն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անդամների ընտրման կարգը, աշխատանքային պարտականությունները։

4-րդ հոդվածը վերաբերում է հավատրամագրված ծրագրերի գործունեությանը և կառավարմանը։ Այստեղ, մասնավորապես նշվում է Special Olympics-ի միջոցառումներին արգելվող դրույթները. օրինակ՝ ազգային դրոշների ցուցադրումը, ոգելից խմիչքների, ծխախոտի օգտագործումը, կոմերցիոն նպատակով տեղեկատվության հաղորդումը, այսինքն բոլոր կարգի խախտումները, որոնք հակասում են SOI-ի Գլխավոր կանոններին։

5-րդ հոդվածը վերաբերում է Special Olympics-ի ծրագրերի հավատարմագրմանը, իսկ 6-րդ հոդվածը՝ մարզիկներին: Այստեղ համապատասխան ենթակետերով ներկայացվում են այն չափորոշիչները, որոնք թույլատրում են մարզիկներին մասնակցելու Special Olympics-ի մարզական միջոցառումներին. սկսած ութ տարեկանից մտավոր զարգացման խանգարում ունեցող անձինք, ովքեր գրանցված են գործող Գլխավոր կանոնների համաձայն, կարող են մասնակցել Special Olympics-ի մարզումներին և մրցումներին:

Մարզումներին և մրցումներին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ մարզիկի գրանցման, պատասխանատվությունից ազատվելու, կրոնական համոզմունքների պատասխանատվությունից ազատվելու, արտակարգ իրավիճակներում պատասխանատվությունից ազատվելու ձևեր: Կազմակերպությունը պահանջում է մարզիկների գրանցման կանոններում պահպանել հետևյալ սկզբունքները. մարզիկի բժշկական տվյալները և բժշկի եզրակացությունը նրա հնարավորությունների մասին: Մարզիկը պետք է ներկայացնի դատական հետապնդումից ազատ լինելու փաստաթուղթ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ պատասխանատվությունից ազատվելու հատուկ փաստաթուղթ մարզիկի և ծնողի վերաբերյալ կապված Դառն սինդրոմով մարզիկի պարանոցի ողերի անկայունության հետ, որը պարանոցի թեքումների ժամանակ կարող է հանգեցնել վնասվածքների:

Հոդվածը անդրադառնում է նաև մտավոր հետամնացության զարգացման մակարդակի որոշման

չափորոշիչներին: Այն իրականացվում է մասնագետների կողմից, օրինակ՝ եթե մասնագետը կայացրել է որոշում, որ անձը տվյալ տարածաշրջանում համարվում է մտավոր հետամնաց կամ տվյալ մարդն ունի մտավոր ֆունկցիաների զարգացման կամք, որը որոշվում է ինտելեկտուալ ցուցանիշների «IQ» արդյունքով, կամ ունի ինացական ֆունկցիաների և աղապտիվ հմտությունների սահմանափակում, ուստի նա կարող է ընդգրկվել մարզական գործընթացում:

7-րդ հոդվածը անդրադառնում է Special Olympics-ի մարզումներին և մրցումներին: Մարզումները, մրցումները, մարզական միջոցառումները ուղղված են հետևյալ նպատակների իրականացմանը.

- զարգացնելով Special Olympics-ը և հիմնական ուշադրությունը բևեռելով մարզիկներին՝ յուրաքանչյուր մարզական միջոցառում, մարզում, մրցում պետք է կազմակերպել, հարմարեցնել այնպես, որպեսզի մարզիկներին հնարավորություն ընձեռվի ցուցադրելով իրենց ունակությունները մասնակցեն ծրագրում ընդգրկված այլ մարզաձևերի մարզումներին և մրցումներին նույնպես,

- կատարելագործել յուրաքանչյուր մարզիկի ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական, մտավոր և հոգևոր հատկություններն ու հնարավորությունները,

- անկախ մարզիկի ընդունակությունների և նվաճումների մակարդակից խթանել մարզական ոգու զարգացմանը, որպեսզի մարզիկը սիրի սպորտը ոչ թե հաղթելու, այլ հանուն մասնակցության համար,

- մարզիչների ու ընտանիքի անդամների բազմակողմանի աջակցության միջոցներով ստեղծել համա-

պատասխան պայմաններ և խթանել ընտրած մարզաձևում յուրաքանչյուր մարզիկի սպորտային վարպետության մակարդակի բարձրացմանը,

- հասարակությանը տեղեկացնել մտավոր խանգարում ունեցող մարդկանց ընդունակությունների ու կարիքների մասին և Special Olympics-ի նկատմամբ բարձրացնել հասարակության աջակցությունը ի հաշիվ նրա, որ Special Olympics-ի շարժման մեջ ընդգրկվեն ծնողներ, ուսուցիչներ, դպրոցն ու հասարակական կազմակերպությունները, զբոսայգիները և հանգստի գոտիները, բժշկական հաստատությունները, հատուկ հաստատություններն ու կենտրոնները, և այն մարդիկ, որոնք օգնում են մտավոր խանգարում ունեցող մարդկանց, ինչպես նաև այլ հասարակական, պետական, սոցիալական և մարզական կազմակերպությունները, որոնք գործում են տվյալ հասարակությունում,

- Special Olympics-ի յուրաքանչյուր սպորտային միջոցառում պետք է արտացոլի իին և ժամանակակից օլիմպիական շարժման արժեքները, ավանդույթները, հարստացնի օլիմպիական ավանդույթներն՝ ընդգրկելով նաև մտավոր խանգարում ունեցող մարդկանց ֆիզիկական և հոգևոր հատկությունները, որոնք բարձրացնում են այդ խմբի մարդկանց ինքնագնահատման նշանակությունը:

Այս հոդվածի ենթակետերից է Special Olympics-ի մարզումներին և մրցումներին ներկայացվող պահանջները, լիազորությունները, չափորոշիչները, տեղեկատվությունը, կամավորների և ծնողների մասնակցությունը, բժշկական սպասարկումը, անվտանգության

ապահովումը, այլ մարզական ծրագրերի ներառումը /ցուցադրական ելույթներ և այլն/, մարզաձևների ու մարզիկների դասակարգումը, ամառային և ձմեռային պաշտոնական և ոչ պաշտոնական /ժողովրդական ազգային մարզաձևներ/ մարզաձևները, արգելված մարզաձևները, պարզեցնելու մասնակցող մարզիկներին ներկայացվող պահանջները և այլն:

Մարզումների կազմակերպման ենթակետում նշվում է, որ մարզիկը մինչ մրցումներին մասնակցելը պետք է անցնի համապատասխան մարզման փուլեր և այդ ժամանակ պետք է երաշխավորվի նաև նրա սնունդը:

Ներկայացնում ենք Special Olympics-ի մարզաձևների դասակարգումը: Այն բաժանվում է երկու ընդհանուր կատեգորիայի /կարգի/ պաշտոնական մարզաձևներ և ազգային-ժողովրդական մարզաձևներ: SOI--ը բացառապես իրավունք ունի որոշելու, թե ո՞ր մարզաձևները և ե՞րբ կարող են համարվել պաշտոնական կամ ազգային-ժողովրդական: Պաշտոնական մարզաձևները պարտադիր պետք է պահպանեն բոլոր հավատարմագրված ծրագրեր ունեցող երկրները: Ամառային պաշտոնական մարզաձևներն են՝ ջրային մարզաձևները /լող և ջրացատկ/, գոլֆը, մարմնամարզությունը, աթլետիկան, ծանրամարտը, բասկետբոլը, անվավոր չմուշկները, բոուլինգը, սոֆտբոլը, հեծանվասպորտը, թենիսը, ծիասպորտը, վոլեյբոլը, ֆուտբոլը: Զմեռային պաշտոնական մարզաձևներն են՝ լեռնադահուկային սպորտը, չմշկավագը, դահուկավագը, հատակի վրա հոկեյը, ձևավոր չմշկասահքը:

Ազգային-ժողովրդական մարզաձևերը SOI-ի կողմից թույլատրված և SOI-ի ծրագրում ընդգրկված այն մարզաձևերն են, որոնք համապատասխանում են SOI-կանոններին և չափորոշիչներին:

Արգելված մարզաձևերի շարքին են դասվում այն մարզաձևերը, որոնք SOI -ի կարծիքով և համաձայն Բժշկական հարցերով խորհրդատու կոմիտեի երաշխավորագրի, չեն համապատասխանում առողջության պահպանման SOI -ի կողմից ընդունված մինիմալ չափորոշիչներին: Ներկայումս դրանք են՝ բռնցքամարտը, սուսերամարտը, հրաձգությունը, կարատեն, ծյուդոն և այլ մենապայքարային ձևերը: Համաձայն SOI -ի կանոնների նա կարող է փոփոխություններ նշցնել արգելված մարզաձևերի ցանկում:

Պարզեատրման կանոնները նույնպես պետք է համապատասխանեն SOI-ի Գլխավոր կանոններին և բոլոր կարգի մրցումներում առաջին, երկրորդ, երրորդ տեղերը գրաված մարզիկները պարզեատրվում են մեդալով, իսկ չորսից ութերորդ տեղերը գրաված մարզիկներն ստանում են պարզեատրման ժապավեններ: Մրցանքը մասնակցած նյուու մարզիկները, նույնպես, ստանում են ժապավեններ /այդպիսի ժապավեններ ստանում են նաև որակազոլված մարզիկները/:

Special Olympics-ի համաշխարհային խաղերը անցկացվում են երկու տարին մեկ անգամ: Ամառային խաղերն այսպիսի կարգով անցկացվում են 1975 թվականից, ձմեռային խաղերը՝ 1977 թվականից, իսկ երկուսը միասին ստացվում է չորս տարին մեկ անգամ:

Այս հոդվածում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև կամավորների գործունեությանը, որոնք ԱՄՆ-ի տարածքում ընտրվում են և բաժանվում երեք խմբի՝

- «A կարգի» կամավորներ, ովքեր ունեն իրավունք շփելու կամ մշտապես շփվում են մարզիկների հետ, օրինակ՝ մարզիչները, վարորդները կամ այն անձինք, ովքեր տեղավորում են նրանց, ապահովում նրանց վարչական և ֆինանսական միջոցներով,

- «B կարգի» կամավորներ, ովքեր իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ շփելու մարզիկների հետ, օրինակ՝ կոմիտեների անդամները կամ միջոցառման պաշտոնական անձինք,

- «C կարգի» կամավորներ, ովքեր համագործակցում են Special Olympics-ի հետ մեկ օրվա կամ միայն մրցման, միջոցառման ընթացքում:

Հաջորդ 8-րդ և 9-րդ հոդվածները վերաբերում են SOI-ի զարգացման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերման, ֆինանսների կառավարման հիմնահարցերին:

10-րդ հոդվածը Գլխավոր կանոնների մեկնաբանումն է, ուր առանձնակի ուշադրության են արժանի տերմիններին վերաբերող ենթակետերը, մասնավորապես՝ անդրադառնալով «մտավոր զարգացման խանգարում» տերմինին նշվում է, որ այն հաստատված է SOI-ի Գլխավոր կանոններով, բայց ԱՄՆ-ում գործածվում է «mental handicap» /«մտավոր հաշմանդամ»/ տերմինը: Այն գործածելու համար ԱՄՆ-ն ստացել է SOI-ի համա-

ձայնությունը, այնուհետև նշվում է, որ այլ տերմիների օգտագործումը անպայմանորեն պետք է գրավոր հաստատվի SOI-ի կողմից:



1990 թ. փետրվար, Սուխումի – ԽՍՀՄ «Դատուկ օլիմպիադաներ» կազմակերպության հիմնադիր կոնֆերանսի մասնակիցները ամերիկյան գործընկերների հետ



Դայաստանի թիմը Դատուկ օլիմպիադան խաղերի բացման ժամանակ

SPECIAL OLYMPICS ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱՆ

1968 թ. հուլիսին Չիկագոյում անցկացվեցին Համաշխարհային առաջին ամառային խաղերը՝ Հատուկ օլիմպիադաների ծրագրով, մրցումներին ԱՄՆ-ի 26 նահանգներից և Կանադայից մասնակցեցին սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող 1000 մարդ: Մրցումների ծրագրում ընդգրկված էին աթլետիկա, լող և խաղային մարզաձևեր:

1971 թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի Ազգային օլիմպիական կոմիտեն պաշտոնապես ճանաչեց «Special Olympics»-ը, որպես սպորտային կազմակերպություն, իսկ 1988 թ. փետրվարին Կալifornիայում կայացած 15-րդ ձմեռային օլիմպիական խաղերի ժամանակ ՄՕԿ-ի նախագահ Խուան Անտոնիո Սամարանը Յունիս քենեդու և Սարժենտ Շրայվերի հետ ստորագրեց պատմական փաստաթուղթ, որով ՄՕԿ-ը պաշտոնապես ճանաչեց Special Olympics կազմակերպությունը և թույլատրեց կրելու «Օլիմպիկան» բառը կազմակերպության անվան մեջ:

1977 թ. փետրվարին Կոլորադո նահանգի Ստիմբոնութ Սպրինգում անցկացվեցին Special Olympics-ի միջազգային առաջին ձմեռային խաղերը, որին նաև նակցում էին 500-ից ավելի մարզիկներ: Մրցումների ծրագրում ընդգրկված էին տարբեր տարածության դահուկավագք և չմշկավագք:

Միջազգային հատուկ օլիմպիական կազմակերպության մարդասիրական վեհ նպատակների իրագործման համար իրեն նեցուկ են կանգնել միջազգային ճա-

նաշում ստացած այնպիսի գործիչներ, ինչպիսիք են՝ Հովհաննես Պողոս 2-րդ Պապը, ԱՄՆ-ի նախագահ՝ Զ. Բուշը, Անգլիայի վարչապետ՝ Մ. Թեթչերը, Հորդանանի թագուհի՝ Նոորը, Չինաստանից՝ Դեն-Պուլֆանգը, Հոնկոնգից՝ Լեդի Ֆուլը և շատ ուրիշներ:

1980-ական թվականներին Միջազգային Special Olympics կազմակերպության շարքերը համալրվեցին մոտ 76 անդամ – պետություններով, իսկ 1990 թ. այս կազմակերպությանը անդամագրվեցին ևս 13 երկրներ, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ հանրապետություններից: Ներկայումս Հատուկ օլիմպիական շարժման մեջ ընդգրկված են մոտ 170 երկրներ:

Անդրադառնալով այս ոլորտում Խորհրդային Միության /ԽՍՀՄ/ ծավալած գործունեությանը, պետք է նշել, որ այն գտնվում էր SOI-ի ուշադրության կենտրոնում և նրա կողմից ստանում էր ոչ միայն բարոյական, այլև ֆինանսական աջակցություն: Այսպես՝ 1990 թվականի փետրվարին SOI-ի ջանքերով Վրաստանի Սուխումի քաղաքում կայացավ ԽՍՀՄ-ի Հատուկ օլիմպիադաներ կազմակերպության հիմնադիր կոնֆերանս, որին ներկա էին ԽՍՀՄ 15 հանրապետությունների ներկայացուցիչներ՝ գիտնականներ, մարզական գործիչներ, տարբեր նախարարությունների ներկայացուցիչներ և մարզական ֆեդերացիաների նախագահներ: Կոնֆերանսին մասնակցում էր նաև ամերիկյան պատվիրակությունը ՄՅՕԿ-ի նախագահ Ս. Շրայվերի ղեկավարությամբ: Պատվիրակության կազմում էին Համաամերիկյան խաղերի ազգային տնօրեն, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Պատրիկա Կրաբսը, Վերջինիա նահանգի

ՀՕԿ-ի նախագահ Վերջինա Ֆոստերը, օլիմպիական խաղերի չեմպիոններ, բժիշկներ, հոգեբույժներ: Համաժողովին մասնակցում էին նաև Լեհաստանի ՀՕԿ-ի նախագահ Յեռիժ Տիշինսկին:

Հայաստանի պատվիրակությունը ներկայացնում էին թիվ 5 օժանդակ գիշերօթիկ դպրոցի ֆիզկուլտուրայի և արատաբանության մասնագետ՝ Գ. Մնացականյանը, թիվ 6 օժանդակ գիշերօթիկ դպրոցի պատմության ուսուցիչ, արատաբան Ս. Մաթևոսյանը և լեզվի մասնագետ-արատաբան Վ. Ղուկասյանը:

Համաժողովի աշխատանքային երկրորդ օրը հիմնվեց ԽՍՀՄ Հատուկ օլիմպիական կոմիտեն, որի առաջին նախագահ ընտրվեց Արատաբանության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս՝ Վ. Ի. Լուբովսկին, Ազգային տնօրեն ընտրվեց Ն. Սլադկովսկան: Ընտրվեց գործադիր մարմին, որում ընդգրկվեց նաև Գ. Մնացականյանը:

Բացի տեսական և կազմակերպչական աշխատանքից, ամերիկացի գործընկերները անցկացրեցին գործնական պարապմունքներ տարբեր մարզաձևերից, քննարկվեցին և պարզաբանվեցին սակավամիտ երեխաների հետ տարվող մարզչական աշխատանքների մեթոդների կիրառման գիտական մոտեցման բազմաթիվ հարցեր: Համաժողովում քննարկվեց Մերձբալթյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների առաջարկությունը. այն է հանդես գալ որպես առանձին հանրապետությունների «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպություններ: Նրանց առաջարկությունն ընդունվեց:

Հատուկ օլիմպիական շարժման գարզացման գործընթացը կազմակերպելու համար բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում առաջնային խնդիր է հատուկ կամ օժանդակ դպրոցների, գիշերօթիկների ստեղծումը:

Հայաստանում սակավամիտ երեխաների համար առաջին օժանդակ դպրոցը բացվել է 1928 թ. Ղ. Ղուկասյան փողոցում գտնվող միահարկ հողածածկ տանիքով շենքերից մեկում: Երկրորդ աշխարհամարտից հետո հատուկ և օժանդակ դպրոցների ցանցն աստիճանաբար ընդլայնվեց, ժամանակին այդ դպրոցներում աշխատել են ուսուցիչներ, որոնք չեն ունեցել արատաբանի մասնագիտություն, սակայն իրենց պատրաստվածությամբ և ամենակարևորը՝ նվիրվածությամբ են կարողացել ուսուցման և կրթության այդ դժվարին գործը դնել պատշաճ մակարդակի վրա: 1960-1970 թ.թ. Հայաստանում արատաբան-մանկավարժների քանակը քիչ էր, սակայն գիշերօթիկ դպրոցներում զգալի աշխատանք էր կատարվում ուսումնադասատիարակչական գործը բարելավելու ուղղությամբ: Դրա մասին են վկայում բազմաթիվ հոդվածների, գրքերի և լուսավորության նախարարության որոշումների առկայությունը, սակայն դեռևս ցածր էր ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման մակարդակը: Դրա վառ վկայությունն էր ֆիզկուլտուրայի դահլիճների, մարզահրապարակների, լողավազանների բացակայությունը, իսկ գործող փոքրաքանակ մարզադահլիճներն էլ կահավորված չեն անհրաժեշտ գույքով և հանդերձանքով: Չնայած իրավճակին, գործին նվիրված որոշ ուսուցիչներ առաջ են քաշում գաղափարներ, որոնք ոչնչով չեն գիշում Միջազ-

գային հատուկ օլիմպիական շարժման գաղափարներին: Մասնավորապես նշենք, որ 1965-1968 թ.թ. Երևանի թիվ 2 օժանդակ գիշերօթիկ դպրոցի ֆիզիկական դաստիարակության ուսուցիչ Գ. Մնացականյանի նախաձեռնությամբ մրցումներ և ընկերական հանդիպումներ են կազմակերպում թիվ 1, 8 օժանդակ դպրոցների մարզիկների միջև: Անցկացվում են մրցումներ աթլետիկա, ֆուտբոլ, վոլեյբոլ, շաշկի մարզաձևերից:

Օլիմպիական շարժման գարզացման կարևոր փուլերից է հանրապետական և համամիութենական մրցաշարերի կազմակերպումն ու անցկացումը:

«Միջազգային հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության օրացուցային պլանի համաձայն 1990 թ. հուլիսի 20-28-ը Գլազգո քաղաքում /Շոտլանդիա/ պետք է անցկացվեր Հատուկ օլիմպիադաներ կազմակերպության Եվրոպայի առաջնություն և ԽՍՀՄ-ը առաջին անգամ պետք է մասնակցեր այդ կարևոր մրցումներին: «Համամիութենական հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության գործկոմը որոշեց հունիս ամսին հետևյալ մարզաձևներից (մարմնամարզություն, աթլետիկա, լող) անցկացնել համամիութենական մրցումներ, որոնց պետք է նախորդեին հանրապետական մրցումները:

Հայաստանը այդ մրցաշարին նախապատրաստվելու նպատակով պետք է կազմակերպեր հանրապետական մրցումներ: Այդ իսկ պատճառով մայրաքաղաքի օժանդակ գիշերօթիկ դպրոցների բազայի վրա ստեղծվեցին լողի և աթլետիկայի թիմեր:

Հայաստանում «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության ստեղծումը օբյեկտիվ և սուբյեկտիվ

պատճառներով հետաձգվում էր, չնայած հանրապետության սպորտպետկոմը, առողջապահության և սոցիալական ապահովության նախարարությունները պատրաստակամ էին գործընթացն սկսելու: Սակայն Հայաստանում տիրող բարդ քաղաքական իրավիճակը դժվարացնում էր այդ մարդասիրական գործն առաջ տանելու ուղղությամբ տարվող աշխատանքները:



**1968 թ.- թիվ 2 օժանդակ գիշերօթիկ դպրոցի
վոլեյբոլիստները մրցման ժամանակ**

Մրցումներին հետևելը, մեթոդական օգնությունը, մրցումների անցկացումը, մարդասիրական և ազգասիրության նկատառումներից ելնելով՝ իր վրա վերցրեց Երևանի թիվ 5 օժանդակ գիշերօթիկ դպրոցի ուսուցիչ-արատարան Գ. Մնացականյանը: Այդ գործում իրենց ավանդն ունեն նաև Լուսավորության նախարարությանը կից լողի մասնագիտացված դպրոցի տնօրեն Կ. Զարգարյանը, աթլետիկայի դպրոցի ղեկավարությունը և Հարգդան մարզադաշտի ողջ կոլեկտիվը՝ նախկին ֆուտբոլիստ Հարություն Քեհյանի ղեկավարությամբ, հատկապես բազաների տրամադրման և հասարակական

կարգով մարզիչների ապահովման գործում: Թիմերի համարման և հանդերձավորման գործում իրենց ներդրումը ունեցան մի շարք պետական և հասարակական կազմակերպություններ:

1990 թ. հունիսին Հայաստանի աթլետների թիմը ժամանում է Սամկտ-Պետերբուրգ: Թիմի կազմում ընդգրկվել էին Յու. Ներսիսյանը, Ա. Առաքելյանը, Ս. Խառատյանը /Երևանի թիվ 8 օժանդակ դպրոց/, Ա. Եղիազարյանը /ախտորոշմամբ «Դառն»/, Յ. Մերոյանը /թիվ 1 օժանդակ դպրոց/ և Ա. Եղիազարյանը /թիվ 2 օժանդակ դպրոց/: Յունիսի 16-17-ը անցկացվեցին աթլետիկայից առաջին համամիութենական մրցումները: Մրցավայր էին ժամանել Մոսկվայի, Ռուսականայի, Ադրբեյչանի, Ռուսաստանի, Բելառուսի, Թուրքմենիայի, Տաջիկստանի, Սամկտ-Պետերբուրգի թիմերը:

Ընդհանուր թիմային հաշվարկում Հայաստանի թիմը 74 միավորով գրավում է 7-րդ տեղը՝ առաջ անցնելով Ռուսականայի և Տաջիկստանի թիմերից: Պետք է նշել, որ Հայաստանի թիմը միակն էր մրցումներում, որ հայտագրել էր Դառն ախտորոշմամբ մարզիկ, որն ըստ կանոնադրության՝ առավելություն էր թիմերը տեղաբաշխելիս: Չնայած մրցաշարի կազմակերպչական որոշ թերությունների /մրցման կազմակերպիչները մասնակիցներին չեն խնբավորել ըստ տարիքի և իրենց մարզական ունակությունների, հանրապետություններից նախապես ստացված սպորտային ցուցանիշների/, անկախ մրցանակային տեղից հիմք դրվեց ՀՀ-ում Հատուկ օլիմպիական շարժման սկզբունքների, գաղափարների, ծրագրերի իրականացնան գործընթացին:

Դայ պատաճի աթլետների անհատական մարզական արդյունքները

(1990 թ. հունիսի 16-17, Սանկտ-Պետերբուրգ)

/Ծ/ Մարդու կողմէն սպառագիտ հայոց		/Ծ/ Եվանդու պահական կազմակերպութեան հայոց		/Ծ/ Եվանդու պահական կազմակերպութեան հայոց	
1	Ներսիսյան Յու	7.1	13.2		9.73
2	Եղիազարյան Ա.	8.3			1.48
3	Առաքելյան Ա.		13.1		4.88
4	Գաբրիելյան Ա.		30.8		
5	Մերոյան Ք.		36.9		
6	Խառատյան Ա.			109.8	235.6

1990 թ. հունիսի 20-22-ը Խարկով քաղաքում անցկացվեց Հատուկ օլիմպիդաների ծրագրով համամիութենական առաջին լորի մրցումները: Մրցումներին մասնակցում էին Ուզբեկստանի, Ադրբեյչանի, Ղայաստանի, Սամակ - Պետերբուրգ /2 թիմ/, Պերմ և Գոմել քաղաքների թիմերը:

7 թիմերի մեջ Հայաստանի մարզիկները 70,5 միավորով գրավեցին 4-րդ տեղը: Թիմի կազմում ընդգրկվել էին Վ.Միլիտոսյանը, Ա.Պլատոնովը, Ա.Շովատիյանը՝ Երևանի թիվ 5 օժանդակ գիշերօթիկ, Ա.Նազարյանը՝ թիվ 8, իսկ Տ.Սահոյանը և Ս.Ասատրյանը՝ թիվ 6 դպրոցներից, արատաբան, մանկավարժ Ս.Մաթևոսյանը և լողի մարզիչ Ն.Վարյանը:

Լողորդների թիմը Երևան վերադարձավ մեծ ավարով՝ շահելով բոլոր տեսակի մեդալներ: Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ շուրջօրյա, սիստեմատիկ մարզումները դրական ծևով են անդրադառնում սակավաճիտ Երեխաների ֆիզիկական զարգացմանը, բարձրացնում են նրանց ֆիզիկական ընդունակությունները և կարողությունները, որն էլ ի վերջո, նպաստում է նրանց հոգեկան, մտավոր զարգացմանը:

Տ.Սահոյանը 200 մ թիկնալողում գրավեց 1-ին, 25 մ և 100 մ բարերֆլայ մրցաձևներում՝ համապատասխանաբար 3-րդ և 2-րդ տեղերը:

Ա. Շովատիյանը 100 մ բրաս լողառում նվաճեց արծաթե մեդալ, 100 մ ազատ լողառում Վ.Միլիտոսյանը գրավեց 2-րդ տեղը, Ա.Նազարյանը՝ 25 մ թիկնալողում գրավեց 2-րդ տեղը, իսկ Ս.Ասատրյանը՝ 50 մ լողատարածությունում 3-րդն էր: Վերջինս նաև 25 մ և 100 մ թիկնալողում շահեց Երկու բրոնզե մեդալ: 4X25 մ կոմբինացված փոխանցումալողում Հայաստանի մարզիկները Տաշքենի, Սամկո-Պետերբուրգի և Պերմ քաղաքներից հետո 1.44.7 արդյունքով գրավեցին 4-րդ տեղը:

Հայաստանում «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության ստեղծման համար հինադիր ժողովի հրա-

վիրման հարցը մնում էր անորոշ վիճակում: Հարկավոր էր ստեղծել աշխատող օրգան, կազմել ծրագրեր, մշակել հրահանգներ և շրջաբերականներ, որպեսզի ուսումնական տարվա հենց սկզբից դպրոցներում իրագործվեր Հատուկ օլիմպիական կազմակերպության խնդիրները և պահանջները:

Աննախաղեա առաջընթաց է ապրում Հատուկ օլիմպիական շարժումը Եվրոպայում, որի ապացույցն է մասնակից Երկրների և մարզիկների քանակական աճը:

1990 թ. Իուլիսին Գլազգո քաղաքում /Շոտլանդիա/ մեկնարկեց Միջազգային հատուկ օլիմպիադաների ծրագրով Եվրոպայի հերթական առաջնությունը: Եվրոպայի առաջնությանը 31 Երկրներից մասնակցում էին մոտ 2 հազար մարզիկներ, որոնց տարիքը տատանվում էր 8 տարեկանից մինչև կենսաթոշակայինը: Երեխաները կազմում էին մասնակիցների 50 տոկոսը:

ԽՄՀՄ-ի թիմը ներկայացնում էին 23 մարզիկ, որից 3 մարմնամարզիկ, 12 աթլետ, 8 լողորո: Թիմի հետ մեկնեցին 7 մարզիչ և 1 թարգմանիչ: Պատվիրակությունը ղեկավարում էր համամիութենական Հատուկ օլիմպիադաներ կազմակերպության ազգային տնօրեն Ն.Սլադկովան:

Խորհրդային թիմը ուշադրության կենտրոնում էր: Նրա մասին գրում էին բազմաթիվ թերթերում, հատկապես «London Times»-ում, հեռուստատեսության այնպիսի ընկերություններ, ինչպիսիք էին «ABC», «BBC» զգալի ժամանակ էին նվիրում՝ մեկնաբանելու խորհրդային թիմի ելույթները:

1990 թ. միութենական հեռուստատեսությամբ ցուցադրվեցին Եվրոպական խաղերը /հայկական հետուստատեսությունը այն չցուցադրեց/ և արժանահիշատակ հեռուստաֆիլմ, թե ինչպիսի սոցիալական պայմաններում են ծնվում երեխաները, ցուցադրեցին մանկատների, գիշերօրիկ և հատուկ դպրոցների խղճուկ պայմանները: Հեռուստաֆիլմը պատմում էր, թե ինչպես արտասահմանում մեկ երեխայի հետ պարապում են մի քանի մասնագետներ: Երեխային հատուկ դպրոց են ուղարկում միայն այն դեպքում, եթե արատն այնքան լուրջ է, որ անհատական և լրացուցիչ պարապմունքները, տեխնիկական և տեսազննողական պարագաների օգտագործումը արդյունք չեն տալիս: Ֆիլմի հեղինակները բարձրացնում են ևս շատ կարևոր մի հարց, թե ինչպիսին է հասարակության վերաբերմունքը մտավոր խանգարում ունեցող մարդկանց հանդեպ:

Հայաստանի Հանրապետությունում Հատուկ օլիմպիական շարժման զարգացման գործընթացում կարևոր փուլ է համարվում ՀՀ ՀՕԿ կազմավորումը, որը ստեղծվեց 1990 թ. նոյեմբերին, երբ հրավիրվեց Հայաստանի հատուկ օլիմպիական կազմակերպության հիմնադիր ժողովը: Հանրապետության սպորտպետկոմի, լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովության նախարարությունների ներկայացուցիչների, «Աշխատանքային հերթափոխ» կամավոր մարզական ընկերության և հանրապետության տարածքում գտնվող օժանդակ գիշերօրիկ դպրոցների տնօրենների, ֆիզիկական դաստիարակության ուսուցիչների և արատաբանության մասնագետների մասնակցությամբ:

Համաժողովը բացեց Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Մ.Ս. Խապիրյանը: Հատուկ օլիմպիական շարժման նպատակների և խնդիրների մասին գեկուցումով հանդես եկավ Գ. Մնացականյանը: Զեկուցումն ավարտվեց Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Առաջինի դեռևս 50 տարի առաջ ասված խոսքերով. «...Եթե դժբախտությունը և մարդասիրությունը հայ ժողովրդի ճակատագիրն է, ապա պետք է լավ գիտենաք, որ տոկալն ու հաղթահարելն ալ, ապրիլն ալ անոր ճակատագիրն է...»:

Համաժողովը քննարկեց և ընդունեց կազմակերպության կանոնադրությունը, ընտրեց գործադիր մարմին: ՀՀ ՀՕԿ-ն առաջին նախագահ ընտրվեց Գ.Մնացականյանը, փոխնախագահ՝ Կ. Բարիկյանը /լուսավորության նախարարության գիշերօրիկ դպրոցների բաժնի տեսուչ/, ազգային տնօրեն ընտրվեց Ա. Մեհրաբյանը /սպորտպետկոմի բաժնի հրահանգիչ/:

Կազմակերպության կանոնադրությունը ՀՀ արդարադատության նախարարությունը հաստատեց 1991 թվականի մայիսին:

Հայաստանի Հատուկ օլիմպիական կազմակերպության գործունեությունը պատշաճ ձևով լուսաբանեցին «Մարզական Հայաստան» թերթը, որը 1991թ հունվարի 5-ի համարում Գ. Բեգլարյանի ստորագրությամբ տպագրեց «Բարեգործական սկզբունքով» հոդվածը և «Հնչակ Հայաստանի» թերթը, որը 1991թ. մայիսի 23-ի համարում տպագրեց «ՀՀ Հատուկ օլիմպիական նորաստեղծ կազմակերպություն» հոդվածը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ:

Հանրապետական մրցումները նոր երևույթ էին Հայաստանի օժանդակ դպրոցների պատմության մեջ: 1991թ. մարտին Երևանի «Հրազդան» մարզադաշտում բարձրացվեց «Հատուկ օլիմպիական» կազմակերպության ծրագրով ընդունված հանրապետական առաջին մրցումների դրոշը:

Թիմեր էին ներկայացրել հանրապետության օժանդակ գիշերօթիկ ներքոհիշյալ դպրոցները՝

- Կամոյի օժանդակ դպրոց՝ արլետիկա /տղաներ և աղջիկներ/, ֆուտբոլ.
- Աշտարակի օժանդակ դպրոց՝ արլետիկա /տղաներ, աղջիկներ/.
- Երևանի թիվ 1 օժանդակ դպրոց՝ արլետիկա /տղաներ և աղջիկներ/, ֆուտբոլ.
- Երևանի թիվ 5 օժանդակ դպրոց՝ հանդբոլ, թենիս.
- Երևանի թիվ 6 օժանդակ դպրոց՝ արլետիկա, ֆուտբոլ, բասկետբոլ, լող.
- Երևանի թիվ 2 օժանդակ գիշերօթիկ դպրոց՝ արլետիկա /տղաներ/.
- Երևանի թիվ 8 օժանդակ գիշերօթիկ դպրոց՝ արլետիկա /տղաներ/:

Հանրապետական առաջին մրցումների արդյունքները (1991 թ., մարտ, Երևան)

N	Մասնակից դպրոցներ	Գուտըն՝ մասնագետների թվով /գուտըն տեղեկություն/	Ալեքսանդր Մանուկյան՝ արլետիկա աշխատավայրի թվով /գուտըն տեղեկություն/	Լիլիթ Վահագիսյան՝ արլետիկա աշխատավայրի թվով /գուտըն տեղեկություն/	Հանդբոլի աշխատավայրի թվով /գուտըն տեղեկություն/	Սեղանի թենիսիստ աշխատավայրի թվով /գուտըն տեղեկություն/	Բասկետբոլի աշխատավայրի թվով /գուտըն տեղեկություն/
1	Կամոյի օժանդակ դպրոց	1	1-2	–	–	–	–
2	Աշտարակի օժանդակ դպրոց	–	4	–	–	–	–
3	Երևանի թիվ 1 օժանդակ դպրոց՝ արլետիկա	2	3	–	–	–	–
4	Երևանի թիվ 2 օժանդակ դպրոց	–	5	–	–	–	–
5	Երևանի թիվ 5 օժանդակ դպրոց	–	–	–	1	1	–
6	Երևանի թիվ 6 օժանդակ դպրոց	3	6	1	–	–	1
7	Երևանի թիվ 8 օժանդակ դպրոց	–	1-2	–	–	–	–

Այսուսակից պարզ երևում է, որ այնպիսի մարգածներ, ինչպիսիք են լողը, հանդբոլը, սեղանի թենիսը, բասկետբոլը, վոլեյբոլը լայն տարածում չունեին օժանդակ դպրոցներում, չնայած գործող ֆիզիկական դաստիարակության ծրագրով այն պահանջվում էր: Հանրապետական մրցումները ցույց տվեցին, որ կան շատ բարողումներ, միաժամանակ արձանագրվեց, որ մի շարք ուսուցիչների մոտ ցածր էր տեսական և գործնական պատրաստականությունը:

1991 թ. ուսումնական տարվա ավարտին, ըստ համանիութենական մարզական միջոցառումների պլանի, թիմերը պետք է մեկնեին Միության տարբեր քաղաքներ մասնակցելու տարբեր մրցաշարերի: Սեղանի թենիսի թիմը մեկնեց Դուբասարի /Մոլդովա/, հանդբոլի թիմը՝ Սանկտ-Պետերբուրգ: Մեկնած թիմերը, բացի լողորդմերից, էական հաջողությունների չհասան: Թիմերում ընդգրկվել էին դառնաներ, հենաշարժողական ապարատի խախտում ունեցող երեխաներ /հանգամանք, որը հակասում էր Հատուկ օլիմպիականի ծրագրի պահանջներին/:

1991 թ. մայիսի 13-ին Սոսկվայում կայացավ համամիութենական «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության գործկոմի նիստ, ուր քննարկվեցին Համամիութենական մրցումների արդյունքները և Մինեապոլիսում Հատուկ օլիմպիական 8-րդ ամառային խաղերին առաջին անգամ Խորհրդային Միության հավաքական թիմի մասնակցության հարցը: Որոշվեց այդ խաղերին մասնակցել 9 մարզաձևերից՝ մարմնամարզություն, աթլետիկա, սեղանի թենիս, լող, ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ և ծանրության բարձրացում:

Մարզիկներին պետք է ուղեկցեին 28 մարզիչ և օգնական:

Խաղերին պետք է մասնակցեին 16-30 տարեկան 105 մարզիկներ, որոնցից՝ 61 տղաներ և 44 աղջիկներ: Ըստ գերատեսչությունների պատկերը հետևյալն էր՝ լուսավորության նախարարության Ենթակայությունից՝ 73, իսկ սոցապ նախարարությունից՝ 32 մարզիկներ:

1991 թ. հուլիսին հայտնի դարձավ, որ Հայաստանին, Վրաստանին, Ղրղստանին, Տաջիկստանին և Ուկրաինային թույլատրվում էր մրցումներին, որպես փոխարինող ներկայացնել տարբեր մարզաձևերից մեկական սակավամիտ մարզիկ:

Աշխարհի ամառային 8-րդ խաղերի պաշտոնական բացումը տեղի ունեցավ Մինեապոլիսի /ԱՄՆ/ «Մետրո-դրոմ» փակ ստադիոնում, որը տեղափորում էր 50 հազար հանդիսատես: Ստադիոնում բոցավառվում էր Հունաստանից բերված կրակը: Խաղերին ներկա էին Յունիս Քենեթի-Շրայվերը, Սարժենտ Շրայվերը, ԱՄՆ-ի կոնգրեսականները, տարբեր երկրներից ժամանած պետական, կրոնական, հասարակական գործիչներ և այլ պատվավոր հյուրեր:

Թիմերին առաջնորդում են համաշխարհային սպորտի այնպիսի աստղեր, ինչպիսիք են Չարլզ Գրինը, Նադիա Կամանեչին, Բարտ Կոնորը, Ֆլորենս Գրիֆտ-Զոյները, Ալժան Ժարմուխամեդովը, Գալինա Պրոզումենշիկովան: Խաղերի բացմանը ներկա էին նաև Բրագիլիայի հոչակավոր ֆուտբոլիստ Զիկոն, նշանավոր հոկեյիստ Գրետեցկին:

ԱՄՆ-ի թիմն առաջնորդում էր Զորջ Բուշի կառավարության ֆիզկոլտուրայի և սպորտի գծով նախագահի խորհրդական Առնոլդ Շվարցենեգերը՝ ամբողջ աշխարհին հայտնի կոլտուրիստը, որը 7 անգամ նվաճել է «Միստր Օլիմպիա» մրցանակը: Բժշկական սպասարկումը դրված էր ամենաբարձր իհմքերի վրա, ընդհուպ մինչև հատուկ սարքավորումներով ավտոբուս-վիրահատարանը:

Մրցումների ընթացքում կազմակերպվում է Յատուկ օլիմպիադաների տարբերանշանը կրող իրենի և հագուստի վաճառք, այն էլ բարձր արժեքներով: Տեղացիները, հյուրերը գնելով այդ ապրանքները՝ իրենց մասնակցությունն են բերում «Յատուկ օլիմպիադաների» կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավմանը:

Յայաստանի Յատուկ օլիմպիական կազմակերպությունում ևս մեծ աշխատանք էր տարվում 1993 թ. Ավստրիայում անցկացվող Յատուկ օլիմպիական ծմեռային խաղերին մասնակցելու, որպես ինքնուրույն, միջազգային Special Olympics կազմակերպության անդամ պետություն:

ՀՀ-ում «Յատուկ օլիմպիական» /ՅՕ/ հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1993 թվականին, իսկ 2002 թվականին կազմակերպության հերթական կոնֆերանսում այն վերանվանվել է՝ «Յայկական հատուկ օլիմպիադաներ» /ՅՅՕ/ և համբիսանում է Միջազգային հատուկ օլիմպիադաներ շարժման անդամ, առաջնորդվելով վերջինիս սկզբունքներով, գաղափարախոսությամբ և քաղաքականությամբ:

Չնայած հայ հասարակությանը դեռևս ժամանակ է պահանջվում զնահատելու ֆիզիկական կոլտուրայի և սպորտի նշանակությունն ու դերը մտավոր հետամնաց մարդկանց կյանքի, ապրելակերպի կենսամակարդակի բարձրացման գործում, սակայն ակնհայտ է, որ Յատուկ օլիմպիական շարժումն աստիճանաբար ընդունվում է նրա կողմից: Անհերքելի է, որ օլիմպիական դաստիարակությունն ու սպորտը սերտորեն կապված են սոցիալշակութային իրականության հետ, որպես հասարակական կյանքի և գործունեության բաղկացուցիչ մաս, որպես վեհ զգացմունքների աղբյուր և բարեկամական փոխհարաբերությունների դրսևորման միջավայր:

ՀԱՍՏԱՏԻՄԱՐԴԱՅԻՆ SPECIAL OLIMPICS INTERNATIONAL ԵՎ ՀՀ ՀՕԿԱԶԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Միջազգային հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության համբավը տարածվել էր երկրագնդով մեկ: Այն դարձել էր մի հսկա կազմակերպություն, ուներ հզոր ֆինանսական բազա, որը նրան իրավունք էր վերապահում անցկացնելու Եվրոպայի և աշխարհի, ամառային և ձմեռային օլիմպիական խաղեր: Կազմակերպությանը օգնության ձեռք են մեկնում նաև այլ կազմակերպություններ, թողարկվում է մարզական /և ոչ միայն մարզական/ արտադրանք, գործարարները միայն կազմակերպության տարբերանշանի օգտագործման համար գգալի նուժումներ են կատարում:

Հատուկ օլիմպիական գաղափարների տարածման միջոցների հայթայթման համար մեծ գործ են կատարում սպորտային ասոցիացիաները, հեռուստատեսային ընկերությունները, ինչպիսիք են «ABC»-ին, «Սպորտային լայն աշխարհ», «BBC»-ին և այլն: Այդ աշխատանքից անմասն չի մնում և կիմոարվեստը, օրինակ՝ 1981 թ. հունիսին «Սուլպերմեն-2» ֆիլմի պրեմերիան, որը կայացավ Լոնդոնում, Վաշինգտոնում և Նյու Յորքում, հավաքեց հսկայական գումար «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության համար:

Կազմակերպության հեղինակության բարձրացման գործում առաջնային էր նաև երկրների նախագահների վերաբերմունքը: 1981 թ. ԱՄՆ-ի փոխնախագահ Ջ. Բուշը, 1983 թ. նախագահ Ռ. Ռեյգանը «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության անդամների համար կազմա-

կերպեցին ընդունելություն: Կազմակերպությանը ֆինանսապես օգնելու համար 1986 թ. անցկացվեց ջահերով փոխանցումավագը ԱՄՆ-ի 44 նահանգների միջև, որին մասնակցեցին 14 հազար մարդ: Միջոցառումը կազմակերպությանը բերեց մեկ միլիոն դոլարի եկամուտ, իսկ 1987 թ. նմանօրինակ վազքը բերեց 2 միլիոն դոլար: Միջոցառման մասնակիցները /մոտ 30 հազար մարզիկ/, անցան ԱՄՆ-ի բոլոր նահանգներով և 7 երկրներով: Նույն թվականին պրոֆեսիոնալ երգիչները լուս ընծայեցին տոնական ալբոմ՝ «Հատուկ օլիմպիադան տարեդարձ» անվանումով, ուր տեղ էին գտնել ռոքընողովի լավագույն երգիչների լուսանկարները, աշխարհով մեկ վաճառվեցին 2 միլիոն ձայնասկավառակներ և ձայնագրված ժապավեններ և ամբողջ հասույթը փոխանցվեց «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությանը: Երկրի ներքին գործերի նախարարությունը անկարգապահ վարորդների տուգանքից ստացված գումարներից գգալի գումար փոխանցեց կազմակերպությանը:

Անհատ քաղաքացիների, պետական և հասարակական գործիչների, գործարարների և այլ աղբյուրներից ներդրված գումարները, նույնպես, նպաստում են այդ շարժման զարգացմանը: «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության ուժը ժողովուրդն է, հասարակությունը և այն դրսևորվեց կազմակերպության ստեղծման 20-ամյա տարելիցին, որը նշվեց 1988 թվականին: Կազմակերպությանը օգնում էին 500 հազար կամավոր, այդ թվում՝ 100 հազար մարզիչ:

Հաշմանդամային սպորտի զարգացմանն աջակցելու համար կամավորների մեծ պահանջ կա: Դա հնա-

Դավորություն է ընձեռում կյանքի տարբեր ոլորտներից ներդում կատարել սպորտում, երիտասարդության զարգացման և օլիմպիական շարժման գործընթացում: Կամավորներ դառնալու պատճառները հետևյալն են՝ ծառայել շրջապատին, հասարակության պահանջով, ընտանիքի անդամների օրինակին հետևելով, մարդկանց հետ շփվելու, անհրաժեշտ տեղեկատվություն ձեռքբերելու, ինչպես նաև հեղինակության համար: Ցանկացած մարզական կազմակերպության ղեկավար պետք է տեղյակ լինի այս դրդապատճառներին և կարիքներին, գնահատի նրանց այս ծրագրի պահանջների համաձայն և կամավորների համար ստեղծի այնպիսի պայմաններ, որոնք շահավետ են թե՝ անհատի, թե՝ ծրագրի համար:

«Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաև ընտանիք-երեխա, երեխա-հասարակություն կապերի ամրապնդմանը, որը և բարձրացնում է հասարակության հարգանքն ու ճանաչողությունը վերջիններիս նկատմամբ:

1991 թ. դեկտեմբերին Մոսկվայում կայացավ ԽՍՀՄ հանրապետությունների «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության գործադիր կոմիտեի նիստ: Երկրում տիրող ընդհանուր բարդ իրավիճակի հետևանքով նիստին ներկա էին Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ քաղաքների և 7 հանրապետությունների ներկայացուցիչներ: Քննարկվեց կազմակերպության անվանափոխման, 1993 թ. մարտին Միջազգային ձմեռային խաղերին նախապատրաստվելու և այլ հարցեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Հայաստանից խաղերին

կմասնակցեն երկու դահուկորդ և հոկեյ հատակի վրա մարզաձևում՝ մեկ եռյակ կամ հնգյակ: Սակայն, 1992 թ. հանրապետություն տիրող սոցիալ-տնտեսական ծանր պայմանների պատճառով դպրոցները չաշխատեցին, չկազմակերպվեցին մարզումներ և Հայաստանի մարզիկները չմասնակցեցին վերոհիշյալ խաղերին:

Ձմեռային առաջին մրցումներին մասնակցում էին Բելառուսի և Ղազախստանի թիմերը լրիվ կազմով, Ռուսաստանի Դաշնության, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Պերմ, Օմսկ, Սիկտիվկար, Կոլոմնա քաղաքների թիմերը՝ ոչ լրիվ կազմով, Կարելիական Ինքնավար Հանարապետությունը ներկայացրել էր թիմեր Լադվա, Սալմի և Պետրոզավոդսկ քաղաքներից: Մասնակիցների ընդհանուր թիվը 119 էր:

Թիմային հաշվարկով առաջին տեղը շահեցին բելառուսները, երկրորդ տեղը՝ Պերմ քաղաքի թիմը, երրորդ, չորրորդ տեղերը համապատասխանաբար գրավեցին Ղազախստանի և Կոլոմնայի թիմերը: Պետրոզավոդսկում անցկացված ԱՊՀ-ն երկրների առաջին ձմեռային խաղերը մեկ անգամ ևս հաստատեցին այն փաստը, որ սակավամիտ և ֆիզիկական արատ ունեցող երեխաների կյանքում ֆիզիկական կուլտուրան բուժման գլխավոր գործուներից մեկն է:

1990-ական թվականներին Հատուկ օլիմպիական շարժման գործընթացի զարգացման համար կարևոր էր կենտրոնական Եվրոպայի երկրների «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության Վարչակայի հավաքը:

1992 թ. սեպտեմբերին Վարչակայում տեղի ունեցավ Հատուկ օլիմպիական շարժման կազմակերպչական

աշխատանքների գժով Կենտրոնական Եվրոպայի Երկրների տեսագործնական սեմինար, որին մասնակցում էին Մոսկվայի, Չեխիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Հունգարիայի, ինչպես նաև Հայաստանի և այլ Երկրների ներկայացուցիչներ: Հավաքի կազմակերպիչներն էին Լեհաստանի ՀՕԿ նախագահ Երժի Տիչինսկին և ազգային տնօրեն Մարիուշ Շեմետկոն: Տարբեր մարզաձևներից կազմակերպվեցին գործնական պարապմունքներ. մարմնամարզության պարապմունքները վարում էր Իռլանդիայից ժամանած մարզուիի Մատիե Կառոլինը, իոնկեյ հատակի վրա մարզաձևի մարզիչն էր ԱՄՆ-ից Դալ Ջենպը, սեղանի թենիսի մարզումներն անցկացնում էր լեհուիի Դանուտա Ցալինսկյան, իսկ ֆուտբոլի մարզումները՝ Տադեուշ Բենբասը: Մարզահավաքին մասնակցում էր նաև «Միջազգային հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության Եվրասիայի գժով մենեջեր Գրեգոր Ռեպկոֆը: Բացի ծիասպորտից և սեղանի թենիսից, բոլոր մարզաձևների պարապմունքները անցկացվեցին Վարչավայի ֆիզկուլտուրայի ակադեմիայի մարզաքաղաքներում:

Հայաստանի ՀՕԿ-ը բարեկամական կապեր է հաստատում չեխ և լեհ գործընկերների հետ:

Վարչավայի հավաքից առաջ, օգոստոսին միջազգային կազմակերպությունից ստացված գրությունից նկատվում էր, որ հետաքրքրվում են ՀՀ «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությունով: Գրության մեջ մասնավորապես նշվում էր, որ «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության մարզիչները, իրահանգիչներն ու կամավորականները պետք է իրականացնեն մինյանց

հետ համագործակցելու ծրագրերը, նպատակները, որն աշխարհը նախկինում համարում էր անհնար:

Այս գործընթացի հետագա զարգացումը պահանջում էր պետական և հասարակական կառույցների միասնական փոխհամագործակցություն:

Հատուկ ուշադրությունը, որին պետք է արժանանան սակավամիտ մարդիկ, ունի ոչ միայն մարդասիրական երանգ, այլև սոցիալական, այն անհրաժեշտություն է պետության, հասարարակության ինքնապահովման համար:

Դեռևս 19-20-րդ դարում աշխարհի գիտական միտքը հաստատել է, որ ավելի ձեռնտու է ստեղծել հատուկ ուսումնական հաստատություններ, քան թե դատարաններ և բանտեր՝ իրավախախտների համար /սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ անուշադրության մատնված մտավոր հետամնաց մարդկանց շրջանում մեծ տոկոս են կազմում իրավախախտումները/: Այս համատեքստում առանձնահատուկ է օժանդակ դպրոցների պահպանման հարցը: Սակայն 1991 թվականից սկսած օժանդակ դպրոցները պահպանելու և աշակերտական համակազմը ճիշտ ընտրելու գործընթացը անտեսված էր: Գրեթե չին գործում բժշկամանկավարժական հանձնաժողովները: Սակավամիտ երեխաների հայտնաբերումը և հաշվառումը պետականորեն կարևոր հարց է: Առողջապահության, լուսավորության, սոցիալական ապահովության նախարարությունների աշխատանքների կազմակերպումը կախված է նաև այդ թվերի ստույգությունից:

1994 թ. փետրվարին ՀՀ ՀՕ կազմակերպությունը Սարժենտ Շրայվերի կողմից տեղեկացվում է, որ մինչև 1995 թ. Հայաստանի «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպությունը հաստատվել է IV մակարդակով, այսինքն՝ ըստ միջազգային կանոնների այն երկիրը, որում շատ մարդ է ընդգրկված Հատուկ օլիմպիական շարժման ծրագրում և կազմակերպում է մրցումներ /շրջանային, քաղաքային, մարզային/ գրավում է ավելի բարձր մակարդակ: Օրինակ՝ Բելառուսը, Ղազախստանը, Թուրքմենիան կազմակերպության շարքերում ունեին հազարավոր ընդգրկվածներ, անցկացնում էին բազմապիսի մրցումներ, հետևապես գտնվում էին II մակարդակի վրա: Այս նամակի հետ միասին ՀՀ ՀՕԿ-ը տրվում է միջազգային ճանաչում ստանալու վկայական:

1995 թ. Special Olympics International-ի ամառային մրցումները տեղի էին ունենալու Կոնեկտիկուտ նահանգի Նյու Հեյվեն քաղաքում: Միջազգային Special Olympics կազմակերպությունը մրցումներից մեկ տարի առաջ հրավիրում է բոլոր երկրների նախագահներին այն քաղաքը, ուր կայանալու էին մրցումները, ծանոթացնում առկա մարզական բազաներին, քննարկում բազում հարցեր՝ կապված մրցումների կազմակերպված անցկացման հետ:

1994 թ. մայիսին ԱՄՆ-ից ստացված գրության համաձայն ՀՀ ՀՕ նախագահ Գ. Մնացականյանը հրավիրվում է մասնակցելու կոնֆերանսին: Նյու Հեյվենի կոնֆերանսում Հայաստանի ներկայացուցիչը ներկայացնում է «Միջազգային հատուկ օլիմպիական» կազմակերպության գաղափարների կենսագործման և Հայաստանում

դրանց փիլիսոփայության ամրապնդման ուղղությամբ տարվող աշխատանքները, ընդգծելով, որ մեր երկրում այդ սպորտային շարժման մեջ ընդգրկված են շուրջ 300 մարզիկ, 30-ից ավել մարզիչներ, մրցավարներ և որ առաջին քայլերն են կատարվում այդ աշխատանքներում ընդգրկելու նաև ծնողներին ու ընտանիքի անդամներին:

1995 թ. Հատուկ օլիմպիական ամառային 9-րդ խաղերին Հայաստանը առաջին անգամ մասնակցում է որպես ինքնուրույն կազմակերպություն: 1995 թ. հուլիսին Նյու Հեյվենի հնագույն ստադիոնում տեղի ունեցավ խաղերի բացման արարողությունը: ԱՄՆ-ի կառավարությունը խաղերի բացման առթիվ շրջանառության մեջ դրեց մեկ դոլար արժողությամբ նոր դրամ: Խաղերին 142 երկրներից մասնակցում էին մոտ 7000 մարզիկ:

Խաղերի բացմանը մասնակցում էին նախագահ Բ. Քլինտոնը կնոջ՝ Ջիլարիի հետ, Քենեթի – Շրայվեր գերդաստանը, բազմաթիվ պատվավոր հյուրեր տասնյակ երկրներից, հոչակավոր մարզիկներ, կինոաստղեր՝ Շվարցենգերը, ժամանակակիցներ՝ Վան Պամը, լրագրողներ համարյա բոլոր երկրներից:

Խաղերի պաշտոնական բացման արարողությանն առաջին անգամ մասնակցեց հայկական «Հատուկ օլիմպիական» կազմակերպությունը: Որոշ մարզաձևերից մրցումները անցկացվում են Նյու Լոնդոն քաղաքում: Մրցումներին զուգընթաց կայանում էին ունենում պատվիրակությունների ունկավարների տարբեր մակարդակի խորհրդակցություններ:

**Աթետների անհատական մարզական արդյունքները
աշխարհի ամառային 9-րդ խաղերում**

	Ազգանուն, անուն	Մարզաձև	Արդյունքը և տեղը
1.	Եղիազարյան Արմեն	1.վազք 50մ 2.ցատկ երկար. տեղից 3.թենիսի գնդ. նետում	9.12վրկ. - 4-րդ տեղ 1.60մ - 5-րդ տեղ 32մ 60սմ - 3-րդ տեղ
2.	Արաքելյան Արթուր	1.վազք 100մ 2.ցատկ երկար. թափավազք 3.գնդի հրում	14.39 վրկ. - 3-րդ տեղ 4մ 60սմ – 2-րդ տեղ
3.	Նազարյան Արթուր	1.լող 50մ 2.կրոլ 25մ 3.ազատ ոճ 50մ	49.26վրկ.- 1-ին տեղ 21.80 վրկ.- 3-րդ տեղ 37.04 վրկ.- 6-րդ տեղ
4.	Պլատոնով Ալեքսանդր	1.ազատ ոճ 100մ 2.ազատ ոճ 25մ 3.ազատ ոճ 50մ	1.52.85 վրկ.-6-րդ տեղ 16.70 վրկ.- 5-րդ տեղ 45.68 վրկ.- 4-րդ տեղ

Եթե ամփոփելու լինենք աշխարհի ամառային 9-րդ խաղերում Հայաստանի «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության մարզիկների ցույց տված մարզական արդյունքները, ապա պատկերը հետևյալն է՝

1-ին տեղ - 1 մարզիկ, 2-րդ տեղ - 1 մարզիկ, 3-րդ տեղ - 3 մարզիկ, 4-րդ տեղ - 2 մարզիկ, 5-րդ տեղ - 2 մարզիկ, 6-րդ տեղ - 2 մարզիկ:

Հանդիպում է կայանում SOI-ի նախագահ պարոն Ս. Շրայվերի, Յու. Քենեդի-Շրայվերի և ՀՀ ՀՕԿ պատվի-

րակների միջև, որտեղ քննարկվում են ՀՀ ՀՕ կազմակերպության հետագա անելիքների հետ կապված հարցեր՝ մասնավորապես հոկտեմբերին Հունաստանում կայանալիք Եվրոպական երկրների «Հատուկ օլիմպիադան» կազմակերպությունների գիտագործնական կոնֆերանսի վերաբերյալ:

Վերոհիշյալ կոնֆերանսին մասնակցում են Գ.Մնացականյանը և Ա.Մեհրաբյանը: Գիտագործնական համաժողովի աշխատանքները կազմակերպվում են երկու ուղղությամբ՝ միացյալ թիմերի ստեղծում, այսինքն՝ խաղային մարզաձևերում մրցումներին թույլատրել սակավամիտների հետ մասնակցելու նաև, մասսայական դպրոցների այն աշակերտներին /նիշչ 50 տոկոս/, որոնք իրենց ֆիզիկական կարողություններով և մարզական ցուցանիշներով մոտ էին սակավամիտ երեխաների մարզական կարողություններին, ինչպես մարզել սակավամիտներին, անցկացնել մրցումներ «Միացյալ» թիմերի միջև և երկողորդ՝ Հատուկ օլիմպիադան շարժման հետագա զարգացման ռազմավարությունը:

1999 թ. հուլիսին Հյուսիսային Կարոլինայում կայացան աշխարհի ամառային 10-րդ խաղերը: Ըստ ավանդույթի՝ մրցումներին զուգընթաց կազմակերպվում են պատվիրակությունների ղեկավարների խորհրդակցություններ:

Այդ խաղերում Հայաստանի մարզիկների մարզական արդյունքները հետևյալն են՝ Աննա Քոլոյան - գնդի հրում 5.45 սմ - 3-րդ տեղ, վազք 100 մ 17.7վրկ. - 1-ին տեղ, հեռացատկ թափավազքից - 3.31 սմ- 4-րդ տեղ:

Արմեն Եղիազարյանի մարզական արդյունքներն էին. վազք 50 մ 8.91վրկ.- 3-րդ տեղ, հեռացատկ տեղից զույգ ոտքով 1.54 սմ արդյունքով դարձյալ գրավում է 3-րդ տեղը, իսկ թենիսի գնդակի նետում վարժությունում ցույց է տալիս 26 մ 37 սմ արդյունք և գրավում է 1-ին տեղը:

Ըստ 1995-1999 թ.թ. համաշխարհային մրցումների արդյունքների՝ վեց մարզիկ նվաճել են 10 մեդալ՝ երեք ոսկե, մեկ՝ արծաթե և վեց բրոնզե:

2000 թ. մայիսի 27-ից հուլիսի 4-ը Յոլանդիայի Գրոնինգեն քաղաքում կայացած Եվրոպայի առաջնությանը մասնակցում են մարզիկներ 53 երկրներից: Յայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Քալաշյանը գնդակի նետում վարժությունում նվաճում է արծաթե մեդալ, իսկ թենիսիստների ելույթները, ըստ մարզիչների, անհաջող էին, չնայած թիմային հաշվարկով գրավել էին 4-րդ պատվավոր տեղը:

Ակնհայտ է, որ Յատուկ օլիմպիական շարժումը արագընթաց զարգանում էր նաև Եվրոպայի, Ասիայի տարբեր երկրներում: Յատուկ օլիմպիադաները մտավոր հետամնաց մարդկանց համար ստեղծում են մարզական յուրահատուկ արդյունքների ձեռքբերման անսահման հնարավորություններ: Այն կարելի է համարել ժամանակակից աշխարհի սոցիալական ֆենոմեն և ներառում է օլիմպիզմի հումանիստական առաջավոր գաղափարները, որոնք ինչ խոսք, բացառիկ նշանակություն ունեն սերնդի ֆիզիկական և հոգևոր զարգացման գործում:



Արմեն Եղիազարյանը վազքի ժամանակ



Արմեն Եղիազարյանը 3-րդ մրցահարթակում

**«Միջազգային հատուկ օլիմպիադաներ»
կազմակերպության աշխարհի ամառային խաղեր**

Տարեթվերը և խաղերը	Անցկացման վայրը	Մասնակից երկրների քանակը	Մարզիկն երի քանակը
1968 թ. 1-ին խաղեր	Չիկագո, ԱՄՆ	ԱՄՆ-ի 26 նա- հանգ և Կանա- դա	1000
1970 թ. 2-րդ խաղեր	Չիկագո, ԱՄՆ	ԱՄՆ-ի 50 նա- հանգ, Կոլում- բիա, Պուերտո Ռիկո, Ֆրան- սիա	2000
1972 թ. 3-րդ խաղեր	Լոս Անջելես, ԱՄՆ	ԱՄՆ-ի մոտ 50 նահանգ	2500
1975 թ. 4-րդ խաղեր	Միչիգան, ԱՄՆ	10	3200
1979 թ. 5-րդ խաղեր	Նյու-Յորք, ԱՄՆ	ԱՄՆ և 20 երկրներ	3500
1983 թ. 6-րդ խաղեր	Լուիզիանա, ԱՄՆ	ԱՄՆ-ի 50 նահանգ	4000
1987 թ. 7-րդ խաղեր	Սենթ Մորիս, Ինդիանա, ԱՄՆ	70	4700
1991 թ. 8-րդ խաղեր	Մինեապոլիս, ԱՄՆ	100	6000
1995թ. 9-րդ խաղեր	Նյու Յեյվեն, ԱՄՆ	143	7000
1999թ. 10-րդ խաղեր	Յուևսիսային Կարոլինա, ԱՄՆ	150	7000
2003թ. 11-րդ խաղեր	Դուբլին, Իռլանդիա	150	6500
2007թ. 12-րդ խաղեր	Շանհայ, Չինաստան	170	7500
2011թ. 13-րդ խաղեր	Աթենք, Հունաստան		

**«Միջազգային հատուկ օլիմպիադաներ»
կազմակերպության աշխարհի ծմբային խաղեր**

Տարեթվերը և խաղերը	Անցկացման վայրը	Մասնակից երկրների քանակը	Մարզիկներ ի քանակը
1977 թ. 1-ին խաղեր	Կոլորադո, ԱՄՆ	ԱՄՆ, Կանադա	500
1981 թ. 2-րդ խաղեր	Վերմուտ, ԱՄՆ	ԱՄՆ-ի 50 նահանգ	600
1985 թ. 3-րդ խաղեր	Յուտա, ԱՄՆ	14	800
1989 թ. 4-րդ խաղեր	Նևադա, ԱՄՆ	18	1400
1993 թ. 5-րդ խաղեր	Սալօբուրգ, Ավստրիա	50	1600
1997թ. 6-րդ խաղեր	Օնթարիո, Տորոնտո, Կանադա	73	2000
2001թ. 7-րդ խաղեր	Այսակա	70	1800
2005թ. 8-րդ խաղեր	Նագանո, Ճապոնիա	84	1800
2009թ. 9-րդ խաղեր	Այդահո, Բույսի, ԱՄՆ	100	2000
2013թ. 10-րդ խաղեր	Կորեա		

ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀՀ -ՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Նոր դարաշրջանում հասարակության և պետությունների զարգացման, քաղաքակրթության մակարդակի բնորոշման չափորոշիչ է հաշմանդամության խնդիրների, առաջադրված պահանջների լուծման գործընթացը /պետական, հասարակական կառույցների կողմից/: Այս խնդիրների լուծման համակարգում իր առանձնահատուկ դերն ունի ֆիզիկական կուլտուրան և սպորտը, առավելապես՝ ադապտիվ ֆիզիկական կուլտուրան և սպորտը, որն արդեն իսկ տարածվել է աշխարհի բազմաթիվ երկրներում և ժամ առ ժամ ձեռք է բերում նաև այսականություն:

Ինչպես նշվել էր, մտավոր կարողությունների խաթարվածություն ունեցող մարդկանց ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմության արմատները հասնում են 60-ական թվականները, երբ 1963 թ. Մերիլենդում Յունիս քենեդու նախաճենությամբ սկսեց գործել ամառային ճամբար և այդ գործընթացի զարգացումը կապվեց Special Olympics շարժման ծագման ու զարգացման հետ:

Առաջին պաշտոնական պարապմունքները ցույց տվեցին, որ մտավոր կարողությունների խաթարվածություն ունեցող մարդկանց ֆիզիկական հնարավորությունները անսահմանափակ են, ֆիզիկական պարապմունքները, բեռնվածությունը մեծ հաճույք են պատճառում նրանց և բարձրացնում հուզական առույգ վիճակը: Սպորտը խթանում է անհատական ընդունակու-

թյունների զարգացմանը, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ձեռք բերել մարզական բարձր արդյունքներ:

Ադապտիվ սպորտը հնարավորություն է ընձեռում նմանատիպ արատ ունեցող մարդկանց արդյունավետ սոցիալիզացմանը, հարմարվելու առողջ հասարակությանը, բարձրացնում է ապրելակերպի մակարդակը:

Ներկայումս այդ շարժման գլխավոր խնդիրներից է նրանց դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը օժանդակ դպրոցներում կամ հատուկ դասարաններում: Նրանց դաստիարակությունը պետք է կազմակերպել մի քանի ուղղություններով՝ մտավոր, բարոյական, ֆիզիկական, աշխատանքային, գեղագիտական և այլն: Մարդը ծնվում է ոչ հասուն: Հոգեկան կերպարը իր բոլոր մարդկային հատկություններով նա ձեռք է բերում իր կյանքի, շրջակա աշխարհից անընդհատ հոսող տեղեկատվության ընթացքում և գիտակցությունն էլ իր հերթին ձգտում է ամբողջացնել ստացված ինֆորմացիան, այսինքն ժառանգականությունը տալիս է հումք, որի վրա աշխատում է միջավայրը /Գ.Ս.Բաբախանյան, 2006/:

Հայաստանում այս հիմնախնդրի ձևավորման և զարգացման վրա իր ուրույն ազդեցությունն են ունեցել ԽՄՀՄ-ում կատարված ուսումնասիրությունները. բանականության խաթարում ունեցող երեխաների ֆիզիկական դաստիարակության հարցերը քննարկվել են դեռևս 1921 թվականին և դրանց արդյունքները ներդրվել են օժանդակ դպրոցներում: Հայենական մեծ պատերազմի տարիներին երրորդից վեցերորդ դասարաններում մտցվում է ռազմաֆիզիկական պատրաստականություն և շատ շրջանավարտներ գենքը ձեռքներին պայքարում են

ֆաշիստների դեմ: Այս գործընթացը կարելի է համարել այս ուղղության զարգացման 1-ին փուլ:

60-ական թվականների առաջին տարիները կարելի է բնորոշել որպես այդ ուղղությամբ աղապտիվ ֆիզիկական կուլտուրայի զարգացման 2-րդ փուլ, երբ օժանդակ դպրոցների ուսումնական ծրագրում ընդգրուկում են ֆիզիկական դաստիարակության դասերն ու պաշտպանում են ոլորտի առաջին ատենախոսական թեգերը /Ն.Ա.Կողլենկո, 1962/:

3-րդ փուլը՝ երբ օժանդակ դպրոցներում ֆիզիկական վարժություններով պարապմունքների ժամանակ ներդնում են «Հաշմանդամներին պաշտպանելու» ռեժիմ և որի բովանդակությունն էր հնարավորինս արգելել և սահմանափակել երեխաների շարժողական գործողությունները:

1970 թվականից սկսվում է 4-րդ փուլը, երբ Վ.Ս.Մորոզովի կողմից հաղթահարվում են շարժումների արգելման ու սահմանափակումները և ֆիզիկական կուլտուրայի դասերին սկսում են ուսուցանել բարդ շարժողական գործողություններ /հենացատկ և այլն/: Սա ցույց տվեց, որ հատուկ մշակված ծիշտ վարժությունների համակարգի միջոցով կարելի է զարգացնել սաների ֆիզիկական ընդունակությունները:

Պրոֆեսոր Բ.Վ.Սերմենի և նրա գիտահետազոտական դպրոցի ջամքերի շնորհիվ 70-ական թվականների կեսերից սկսվում է աղապտիվ ֆիզիկական դաստիարակության 4-րդ փուլը, ուր ուշադրությունը շեշտադրված էր բանականության խաթարվածություն ունեցող երեխա-



Vahan Babayan, 21, of Special Olympics Armenia, dropped into his coach's arms after he finished sixth in the 1K freestyle race. It was the first time he had skied in hard-packed snow. "The snow here is hard, not soft as it is on the mountain where I trained. But the race was not difficult," said Babayan, who lives in an institution for people with intellectual disabilities and helps his family by cutting wood for them. Babayan is one of just two athletes in the Armenian delegation. "Babayan has become braver since he started cross country skiing. His visit to Japan will make him stronger," said his coach, Artak Israelyan.



Դայ մարզիկների Հատուկ օլիմպիադաներում նվաճած մեդալները

ների շարժողական ընդունակությունների գարգացման վրա:

5-րդ փուլը սկսվում է 90-ական թվականների սկզբներից, երբ օժանդակ դպրոցներում ներդրվում է մարզական գործունեություն: Այս փուլը շարունակվում է մինչև մեր օրերը, որը աղապտիվ ֆիզիկական դաստիարակության, աղապտիվ սպորտի, բանականության սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց բուժական ֆիզիկական կուլտուրայով առողջության վերականգնման և սոցիալիզացման աշխատանքների գործընթացն է: Անհրաժեշտ ենք համարում հավաստել նաև, որ մեր երկրում աղապտիվ սպորտի ի հայտ գալը բանականության արատ ունեցող մարդկանց մոտ, նույնպես կապված է 1963 թվականին ԱՄՆ-ում Հատուկ օլիմպիական շարժման գարգացման հետ:

Ներկայումս բանականության արատ ունեցող մարդկանց աղապտիվ սպորտի կազմակերպման հարցերով մեր երկրում գրաղվում է ՀՀ «Հատուկ Օլիմպիադաներ» կազմակերպությունը, որի նախագահն է Անահիտ Շահվերդյանը, ազգային տնօրենն է Արտակ Խորյայելյանը, ազգային ծրագրի գարգացման ղեկավարն է Անուշ Շահվերդյանը, որոնք սերտորեն համագործակցում են «Միջազգային հատուկ օլիմպիադաներ»-ի և ՀՀ Ազգային օլիմպիական կոմիտեի հետ:

Նրանց համատեղ ծրագրերի առանձնահատկությունը հետևյալն է:

- Պետական, հասարակական, կոմերցիոն կազմակերպությունների կոլեկտիվ պայմանագրերի հիման վրա ինտեգրացման ուժեղացումը, կրթության, սոցիալական

ապահովության բնագավառում, հատուկ դպրոցներում, գիշերօրիկներում, առողջապահական հիմնարկներում, գիտահետազոտական ինստիտուտներում, ֆիզիկական կուլտուրային և սպորտին վերաբերող գաղափարների և գործնական հարցերի ներդրումն ու լուծումը, հատկապես ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում պատրաստվող աղապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետների ակտիվ ներգրավումն այդ շարժման մեջ:

- ՀՀ «Հատուկ օլիմպիադաների» ծրագրերի համատեղում Special Art ծրագրի հետ:

- Մեծ թվով պարապողներ ընդգրկել ինչպես պետականորեն կազմակերպված կառույցներից, այնպես էլ տնային պայմաններում ուսուցվողներից:

Հատուկ օլիմպիական շարժման միջազգային փորձը, «Հատուկ օլիմպիադաներ»-ի կազմակերպչական աշխատանքները ցույց են տալիս աղապտիվ ֆիզիկական դաստիարակության հնարավորությունները հաշմանդամների վարքի և ապրելակերպի ճիշտ ձևավորման գործնթացում: Աղապտիվ սպորտը հնարավորություն է տալիս գտնվել կյանքի այնպիսի պայմաններում, ուր առկա են բարեկանությունը, փոխընթացնումը, կոլեկտիվիզմի զգացողությունը, մոցակցությունը, պայքարը: Եվ դա կատարվում է մարզական, խաղային պայմաններում:

Հատուկ օլիմպիական շարժման մեջ գոյություն ունեն ուսումնամարզական և մրցակցական գործունեության կազմակերպման հստակ կանոններ: Դրանք հնարավորություն են տալիս լուծելու դաստիարակչական խնդիրներ, որոնք ավելի դժվար է լուծել մարդկային

գործունեության այլ պայմաններում, օրինակ՝ մտավոր հետամնաց երեխաները յուրացնելով մարզաձևերի պարզ հնարքները, միաժամանակ տիրապետում են մրցման կանոններին /գնդակը դարպասում է՝ գոլ է, հակառակորդին հրել է՝ խախտում է/ և որոնք էլ պետք է կատարվեն ու ամրապնդվեն կանոնավոր մարզման ընթացքում: Խաղային գործունեությունը խանդավառող է, հուզական և ճգում է շատ երեխաների ու մեծահասակների: Սակայն երբ նրանց հեռացնում են խաղից, նրանք այդ ընդունում են որպես պատիճ: Ակզբունքորեն հատուկ օլիմպիադաների կարևոր պահը մրցակցությունն է և հատուկ մարզիկները հասկանում են, որ իրենց սխալը ճակատագրական կարող է լինել թիմի համար: Հենց այս գործընթացի վրա ստեղծվում են մարզական թիմեր, դպրոցների, քաղաքների, երկրների կոլեկտիվներ: Սակայն ադապտիվ սպորտի այս բոլոր արժեքները կարող են արդյունավետ լինել, եթե դաստիարակչական և մարզական աշխատանքները համակարգված են: Եթե այդ աշխատանքը թողնվի ինքնահոսի՝ ադապտիվ սպորտը կարող է դրսևորել հակառակ արդյունք. ագրեսիա, էգոիզմ, հակասոցիալական վարք:

Հայաստանում գործող համապատասխան կենտրոնների դպրոցների մասնագետները պետք է նկատի ունենան այս գործընթացի սկզբունքները և համագործակցեն ծնողների հետ: Սակայն ՀՀ-ում այս գործընթացն ընթանում է դանդաղ և մանկավարժներից ու ծնողներից պահանջում է մեծ ջանքեր:

Ինչպես նշվել էր՝ «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը, որը

ստեղծվել էր 1993 թվականին, հանդիսանալով «Միջազգային հատուկ օլիմպիադաներ» շարժման անդամ, առաջնորդվում է վերջինիս սկզբունքներով ու գաղափարախոսությամբ: Ներկայումս կազմակերպության կամավոր մարզիչները, ընտամիքի անդամները, բուհերի ուսանողները, մասնավորապես՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետներն ու ուսանողներն իրենց ծառայությունն են մատուցում երևանը և Յայաստանի մարզերը ներկայացնող հատուկ դպրոցների սաներին, որոնք հանդիսանում են ՀՀՕ-ի հատուկ մարզիկներ: Կազմակերպում ու անցկացվում են մարզումներ և մրցումներ ֆուտբոլ, աթլետիկա, լող, սեղանի թեմիս մարզաձևներից: ՀՀՕ-ի ծրագրերը գտնվում են ՀՀ ԱՕԿ-ի, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ու շահումության կենտրոնում, որն էլ ֆինանսավորում է տեղական միջոցառումները և հատուկ մարզիկների մասնակցությունը միջազգային մրցումներում:

2002 թվականից մոտ 980 մարզիկ «Հայկական հատուկ օլիմպիադաներ»-ի տեղական, հանրապետական, միջազգային մարզումներին ու միջոցառումներին մասնակցել են հետևյալ մարզաձևներից՝ աթլետիկա, ֆուտբոլ, լող, սեղանի թեմիս: Արձանագրվել է արդյունքների հետևյալ պատկերը.

2003 թ. հունիսի 16-30-ը Հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերը անցկացվել են Դուբլինում /Իռլանդիա/: Աթլետիկա մարզաձևում Յայաստանը ներկայացրել են չորս մարզիկներ՝ Կարինե Գասպարյանը /Կապան/ ու կենաց բրոնզե մեդալակիր, Աննա Բուլղար-

յանը /Վանաձոր/ ոսկե, արծաթե մեղալակիր, Սերգեյ Սահակյանը /Երևան/ արծաթե մեղալակիր, Վահան Բաբայանը /Գառնի/ 4-րդ, 6-րդ տեղեր /հարկ է նշել, որ 4-8-րդ տեղերը համարվում են պատվավոր և մարզիկները պարզեցնեն հատուկ ժապավեններով/:

2004 թ. մայիսի 14-21-ը Ռոդոս քաղաքում /Հունաստան/ մեկնարկում է «Կրթություն սպորտի միջոցով» Յատուկ օլիմպիադաների համաշխարհային փառատոնը, որտեղ Հայաստանից լող մարզաձևում մասնակցեցին Խորեն Ոսկանյանը ու Գևորգյանը:

2005 թ. փետրվարի 26-ից մարտի 5-ը Նազանյում /ճապոնիա/ անցկացվում են Յատուկ օլիմպիադաների աշխարհի ձմեռային խաղերը: Հայաստանից մրցումներին մասնակցում են՝ Վահան Բաբայանը /Գառնի/, ով նվաճում է 6-րդ պատվավոր տեղը, Խաչիկ Լոռյանը /Վանաձոր/:

2006 թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 5-ը Հռոմում /Իտալիա/ կայացել են Յատուկ օլիմպիադաների երիտասարդների Եվրոպայի ամառային խաղերը: Միջոցառմանը Եվրոպայի 55 երկրներից մասնակցել են 1400 մարզիկ: Հայաստանը աթլետիկա և լող մարզաձևերում ներկայացրել է վեց մարզիկներ՝ Լուսինե Մանուկյանը նվաճել են արծաթե /լող/, Ռուբեն Հակոբյանը՝ արծաթե /լող/, Շուշանիկ Ասատրյանը՝ բրոնզե /աթլետիկա/, Հրանուշ Հարությունյանը՝ ոսկե, բրոնզե /աթլետիկա/, Հասան Ալյանը՝ արծաթե /աթլետիկա/, Մերուժան Գևորգյանը՝ ոսկե, արծաթե /աթլետիկա/ մեդալներ:

2007 թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 11-ը Յատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերը

անցկացվել են Շանհայում /Չինաստանի ժողովրդական Հանրապետություն/: Աշխարհի խաղերին մասնակցել են ավելի քան 10 հազար մարզիկներ ու մարզիչներ, 2000 հյուրեր, ընտանիքի անդամներ ու աշխարհի 170 Յատուկ օլիմպիադաների ծրագրերից լրագրողներ: Մարզիկներն իրենց ուժերը չափեցին 25 տարբեր մարզաձևերում: Հայաստանը ներկայացրել են վեց մարզիկներ աթլետիկա և լող մարզաձևերում՝ Սպարտակ Հակոբյանը նվաճել է ոսկե, բրոնզե /աթլետիկա/, Էդուարդ Ավեյանը՝ արծաթե /աթլետիկա/, Անի Ներսիսյանը՝ ոսկե /աթլետիկա/, Մարիամ Ազատյանը՝ արծաթե, բրոնզե /աթլետիկա/ մեդալներ, Հասմիկ Մկրտչյանը՝ /լող/, Տիգրան Գևորգյանը՝ /լող/:

2009 թ. փետրվարի 3-13-ը Յատուկ օլիմպիադաների աշխարհի ձմեռային խաղերը անցկացվել են Այդահո նահանգի Բոյսի քաղաքում /ԱՄՆ/: Հայաստանը ներկայացրել են 4 մարզիկներ՝ Անի Սողոյանը, Սպարտակ Հակոբյանը, Մերինե Ավեյայանը, Դավիթ Խաչատրյանը:

Ամփոփելով և վերլուծելով Յատուկ օլիմպիական շարժման զարգացման գործընթացը, մասնավորապես մեր երկրում, գիտակցում ենք, որ այն պահանջում է լայնածավալ գործունեություն: Անհրաժեշտ է պետական, հասարակական, հովանավորող կազմակերպությունների աշխատանքային ծրագրերում առանձնահատուկ, նպատակառուղղված գործնական միջոցներ մշակել այս ոլորտի զարգացման ուղղությամբ:

Հուսարովով և հեռանկարային է այն փաստը, որ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում «Աղապտիկ ֆիզիկական կուլտուրայի» ամբիոնը ծավալել է գիտահետազոտական գործունեու-

թյուն մտավոր հետամնաց երեխաների շրջանում, հաշվի առնելով ուսուցման մեթոդիկայի մասնագիտական հատուկ պահանջները և համագործակցում է բուհի այլ ամբիոնների, Հայաստանի Հանրապետությունում գործող համապատասխան կենտրոնների, դպրոցների հետ:

Հատուկ օլիմպիական շարժման զարգացման հիմնական, սկզբունքային նախապայմաններից է ոչ միայն մասնագիտական խոր գիտելիքների իմացությունը, այլ նաև անձի անհատական հատկությունների՝ բարյացակամ, համբերատար, կարեկցող, հարգալից և այլ դրսնորումների առկայությունը:



**ՀՀ «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության
անդամները**

Այսպիսով, պատմական զարգացման նոր փուլում մեր հասարակարգի սոցիալմշակութային զարգացման գործընթացը նպատակաւում և արդյունավետ կընթանա միայն այն դեպքում, եթե օրգանական կապ կստեղծվի անցյալի և ներկայի միջև, խորապես կընդունվեն ազգային մշակույթի ավանդույթները, դրանց նախընթաց շերտերը, որոնք կգուգորդվեն մերօյա հասարակական կյանքի ողջ գործընթացին:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԴԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՊՐԱՍՔՆԵՐ

1. Որո՞նք են «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության նպատակը և խնդիրները:
2. Բնորոշեք «մտավոր հետամնացություն» հասկացությունը:
3. Որո՞նք են Միջազգային Հատուկ օլիմպիական շարժման ծագման նախադրյալները և տարածվածությունը:
4. Որտե՞ղ է ծագել Հատուկ օլիմպիական շարժումը և ո՞վ է հիմնադիրը:
5. Ներկայացնել Special Olympics International –ի նպատակը, առաքելությունը, խնդիրներն ըստ Գլխավոր կանոնների հոդվածների:
6. Ներկայացնել Հատուկ օլիմպիական շարժման հիմնախնդիրները:
7. Որո՞նք են Հայաստանում Հատուկ օլիմպիական շարժման ծագման նախադրյալները:
8. Բնութագրել համաշխարհային առաջին և համամիութենական Հատուկ օլիմպիական խաղերի կազմակերպման առանձնահատկությունները:
9. Ներկայացնել ՀՀ «Հատուկ օլիմպիադաներ» կազմակերպության ստեղծումը և նպատակը:
10. Ներկայացնել ամառային և ձմեռային «Հատուկ օլիմպիադաների» անցկացման տարեթվերը, քաղաքները, մասնակից մարզիկների և երկրների քանակը:
11. Ներկայացնել Հայաստանի մարզիկների մասնակցությունը «Հատուկ օլիմպիադաներում»:
12. Ներկայացնել Հատուկ օլիմպիական շարժման դերը աղապտիկ սպորտի զարգացման գործընթացում:

13. Նկարագրեցեք Հայաստանի Հանրապետությունում Հատուկ օլիմպիադաների զարգացման առանձնահատկությունները 2000 թվականից մինչև մեր օրերը:

14. Օգտվելով գրականության աղբյուրներից մշակել և ներկայացնել Հատուկ օլիմպիադաների մեջ ընդգրուկած մարզաձևերը և մարզիկների դասկարգումը ըստ մտավոր խաթարվածության աստիճանի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Անտոնյան Ս.** -Եթե Զեր երեխան տարբերվում է մյուսներից.- Երևան.- 2000
2. **Բարախանյան Ս.Գ., Խալաթյան Գ.Վ.** – Հատուկ մանկավարժության բառարան.- 2001
3. **Բարախանյան Ս.Գ.** - Օգնենք մտավոր խանգարումներով երեխաներին.- 2006.- 84 էջ
4. **Դարությունյան Ա.Գ.** - Աղապահիվ ֆիզիկական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 2007.- 118 էջ
5. **Աձանթեր Ժ.Ժ., ԲՇԻ ԺՆԵԵԸ Ն.Բ., Չածածեր Ա.Է.-** Այ հեքանդի այ ծանակ ծանակ անդամական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 1997.
6. **Աճեքծածեր Ա.Է.-** Օքչունական անդամական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 2000.- 118 էջ
7. **ԱՌ ԺՆԵԱՅ Է.Բ., Նօյր ԺՆԵԵՐ Ա.Ա.-** Աաշի ասակ անդամական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 2000.- 212 էջ
8. **Ահնաձան Ն.Ի., Օաւ էր աա Է.Ա.-** Աաշի անդամական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 2000.- 240 էջ
9. **Ահնաձան Ն.Ի., Էօժանաձեր Ն.Օ., Նօյր աա Ա.Ա.-** Լ ա- ծանակ անդամական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 2000.- 152 էջ
10. **Ահնաձան Ն.Ի., Էօժանաձեր Ն.Օ., Լ Ի ԾԱ Ի.Ա., ՆԻ էր աա Ա.Ա.-** Աաշի անդամական կուլտուրայի պատմություն և կազմակերպում.- Երևան.- 2000.- 152 էջ

Ôóí êöèî í àëüí í á ñî ñòî ýí èå èí âàëëäí á.-Ó÷åáí í á tî-ñî áèå.-ÑÍ á.-1997.-45 ñ.

11. *I tîçârât é A.I., Aï èððeââ A.A., Nai üëë-ââ A.N.* - Í åòî äè÷åñêèå ðâéî í áí ääöèè tî tî ðâàí èçàöèè ôèçè-÷åñêî áî áî ñî èðâí èý áî áñí tî tâàðâëüí í é øêî èå.- Í .-1996

12. *I tîrâ N.I.* - Ôèçè÷åñêàÿ ðâàáèëèðâöèÿ. – Ðî ñòî áà í/A.- 1999. - 608 ñ.

13. *I èâðîrîâ A.I., Aðñüêrâ N.E.* - Í èèí i èéñêèé ñî í ðò.- Êèåâ.- 1994. - 417ñ

14. *I àðâëèi i èéñêèå âèäü ñi rððâ.* - Ëí òåðí åò.- www.rusfencing.ru

15. *Oâäîrðîââ O.A.* - Ëäðû, óí ðâæí áí èý è í ñèôî èî-äè÷åñêèå ðâðâí èí áè äëÿ ñòðâåí ðî á, í áó÷àþùèöñÿ tî ñî áöèàëüí í ñòè Áääi ðèâí àÿ Õèçè÷åñêàÿ êðëüðóðâl.-Ó÷åáí í á tî ñî áèå.- ÑÍ á.-1999.-134 ñ.

16. *xâðîrèé A.N.* - Ôèçè÷åñêàÿ êðëüðóðâ áî áñí tî tâàðâëüí í é øêî èå.-Ó÷åáí í á tî ñî áèå.- Í .-1997.

17. *Oâi'erââ E.A.* - Ñðâäñðââ áääi ðèâí í é Õèçè÷åñêî é êðëüðóðû.- Í åòî äè÷åñêèå ðâéî í áí âàöèè tî Õèçèðëü-ðóðí í - tîçâi ðî áèðâëüí úí è ðâçâèâþùèi çâí ýðèÿí áâðâé ñ tî ðêëi í áí èÿí è á èí ðâëâéðâëüí tî ðâçâèðèè .- Í .-ÑÍ áâðâñêèé ñî í ðð.-2001.-152 ñ.

18. *Oâi'erââ E.A.* - Í tî ðí ûâ èí oâi öèè tî åòî áî èî áèè áääi ðèâí í é Õèçè÷åñêî é êðëüðóðû.-Ó÷åáí ûâ tî ñî áèå.- ÑÍ á.-1997.- 45 ñ.

19. *Guttman A.*- The Games must go on. Avery Brundage and the Olympic movement.- Columbia University Press.- N.Y.- 1984.- 317 p.

20. *Nissiotis N.*- Philosophy of Olympism: idealism and realism in the Olympic idea.- Bulletin of the Federation international d'education physique.-3/4.-1983.-p.9-1

21. *The Olympic movement.*- Lausanne.- IOC.- 1993.- 110p.

22. The Olympic movement and the mass media: past, present and future issues.- International Conference proceedings.- Calgary.-1989.-111p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՄՏԱԿՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ	7
ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄ- ՆԱՐԱՔԵՐԸ	13
ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌՋԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ	21
SPECIAL OLYMPICS ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵ- ՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ	36
ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ SPECIAL OLIMPICS INTERNATIONAL ԵՎ ՀՀ ՀՕ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՒ- ՆԵՈՒԹՅՈՒՆԸ	55
ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀՀ 2000 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ	69
ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՎՆԵՐ	80
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	82
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	85

Գ.Կ.ԾԱՌՈՒԿՅԱՆ, Ա.Գ.ՋԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ
(ուսումնամեթոդական ձեռնարկ)

Գ.Կ.ԾԱՐՈՒԿՅԱՆ, Ա.Գ.ՃԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ИСТОРИЯ СПЕЦИАЛЬНОГО ОЛИМПИЙСКОГО
ДВИЖЕНИЯ**
(учебно-методическое пособие)

Խմբագիր՝

Տեխ. Խմբագիր՝

Համակարգչային ծևավորումը՝

Գ.Վ.Մնացականյան

Ս.Գ.Գալստյան

Լ.Ա.Մեծոյանի

Ստորագրված է տպագրության 20.07.2010 թ.

Չափը՝ 60x84 1/16: Տպաքանակը՝ 200

Տպագրությունը՝ օֆսեթ, 5.5 տպագրական մամուլ

Տպագրված է Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտի տպարանում

